

## ՆԱԽԱԳԱՅ ԱՍՏ. «ԲԱՆՈՒՐՆԵՐՈՒ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԵՐԿՐԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՍԱԳԻԾԸ ԿՈՒՐՈՒԱԳԾԷ»

Երեքշաբթի, 10 Սեպտեմբեր 2019-ին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ ընդունեց Դամասկոսի մէջ տեղի ունեցած Բանուորներու Միջազգային Արհմիութեան 3-րդ խորհրդաժողովի մասնակիցներուն պատուիրակութիւնը:



Նախագահը անդրադարձաւ նման միութիւններու հետ հանդիպումի կարելորդութեան, լուսարձակի տակ ամենաբարձր բանուորներուն դերը սուրիական միջավայրի բարեկարգման մէջ, դիտել տալով, որ բանուորներու դասակարգը որեւէ երկրի ազգային դիմագիծը կ'ուրուագծէ. հետեւաբար, երբ բանուորները լաւ վիճակի մէջ են, կը կշանակէ, որ միջավայրը ամուրջ ու լաւ է:

Ասատ համաշխարհային տարողութեամբ ուժերու հաւասարակշռութեան խախտումին մասին խօսելով յայտնեց, որ արտադրող ուժերը որեւէ ընկերութեան ամենամեծ խաւը ըլլալով մէկտեղ, որոշումներ գոյացնելու կամ շահոյթներ ճշդելու լիազօրութիւն չունին: Փաստօրէն տնտեսական հզօր կարելիութիւններ ունեցող ուժեր կը ձգտին կառավարել աշխարհը՝ իրենց սեփական շահերու ասպառածման համար, յաճախ բանուորներուն հաշուով:

Նախագահը անդրադարձաւ պատմութեան ընթացքին Սուրիոյ բանուորներուն երկրի տնտեսութեան բերած կարելորդ ներդրումին, անցնելով, որ բանուորները, հակառակ պատերազմի դաժան պայմաններուն, շարունակեցին իրենց աշխատանքը՝ յաղթահարելով բոլոր դժուարութիւնները: Անոնք ոտքի պահեցին երկիրը:

## ԹՐԱՄԹ. «ՄԴԻՏԱԿ ՏԱՆ ՄԷՋ ՊՈՒԹԸՆԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔԸ ԳՈՒՆԻՆԵ»

ԱՄՆ-ի Նախագահ Տանըլտ Թրամի Երեքշաբթի, 10 Սեպտեմբերին յայտարարեց, որ ԱՄՆ-ի ազգային ասպառածութեան խորհրդատու Ճոն Պոլթընին յայտնած է, որ այսուհետեւ իր ծառայութեան կարիքը չունի:



Պոլթըն, գործարար էր Գաղտնի գործակալը կը համարէ, գլխաւոր շատագոյն էր Ուաշինկթընի Իրանի միջուկային համաձայնութենէն դուրս գալու որոշումին: Երեւոյթ մը, որ միջազգային բազմակողմանի տագնապներու դուրս բացաւ:

Մոսկուա Պոլթընի հրաժարականը ներքին հարցերու վերագրեց, իսկ Իրան՝ ԱՄՆ-ի պատժամիջոցներու քաղաքականութեան ճախողութեան: Քաղաքական վերլուծաբաններ, ծայրայեղ դիրքորոշումներու տեր Պոլթընի հրաժարականին լոյսին տակ, ամերիկեան արտաքին քաղաքականութեան մէջ կշանակալից փոփոխութիւններ կ'ակնկալեն:

Սպիտակ Տունը շեշտեց, որ Թրամի համամիտ էր Պոլթընի քաղաքական տեսակետներուն:

Իր կարգին Սպիտակ Տան փոխբանբեր Կատլի Ան Չարլի Զոփրման յայտնեց, որ պիտի փոխարինէ Պոլթընը:

## ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱՍՆԱԿՅԵՃՍԱՒ ԴԱՍԱԿՈՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄԻՆ

28 Օգոստոսին 7 Սեպտեմբերին Դամասկոսի ցուցահանդէսներու հրապարակին վրայ տեղի ունեցաւ Դամասկոսի Միջազգային 61-րդ ցուցահանդէսը, որուն մասնակցեցան անցի քան 1700 սուրիական եւ օտարերկրեայ ընկերութիւններ Ռուսիայէն, Իրանէն, Չինաստանէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Չեխիայէն, Պելառուսիան եւ այլն: Ցուցահանդէսին ընդհանուր ամամբ մասնակցեցան 38 օտարերկրեայ պետութիւններ:

Դամասկոսի միջազգային ցուցահանդէսին մասնակցեցաւ նաեւ Սուրիոյ մէջ ՀՀ Դեսպանութիւնը, որ ցուցահանդէսի այցելուներուն ներկայացուց Զայաստան արտադրող սննդամթերքի, հիւթերու, հանքային ջուրի, գինիի եւ քունեակի օրինակներ: Հայաստանի տաղաւարին մէջ ցուցադրուած էին նաեւ շինարարութեան, բժշկական սարքերու, էլեկտրական, ոսկերչական եւ արհեստագիտական ոլորտներուն մէջ մասնագիտացած ընկերութիւններու տեղեկատուական եւ գովազդային նիւթեր:



Ցուցահանդէսի օրերուն հայկական տաղաւարը ունեցած է այցելուներու մեծ հոսք, իսկ սուրիական լրատուամիջոցները լայնօրէն անդրադարձած են Հայաստանի մասնակցութեան: Ցուցահանդէսի փակման արարողութեան Սուրիոյ տնտեսութեան եւ արտաքին առեւտուրի Նախարար Սամեր Խալիլ ՀՀ Դեսպանութեան յանձնած է Դամասկոսի Միջազգային Ցուցահանդէսի մասնակցութեան յուշամետալը:

Դամասկոսի Միջազգային Ցուցահանդէսը Սուրիոյ տնտեսական մեծագոյն ձեռնարկներէն կը համարուի, իսկ Մերձավոր Արեւելքի ամենահին տնտեսական ցուցահանդէսներէն մէկն է: 2011-2016-ին ցուցահանդէսը չէր կազմակերպուեր պատերազմական վիճակին բերումով, սակայն 2017-ին վերսկըսաւ աշխատանքը: Ցուցահանդէսի վերաբացումէն ետք, Հայաստան տեսական կը մասնակցի ձեռնարկին:

## ՍՈՒՐԻԱ ԽՍՏԻ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՀՈՂԱՏԱՐԱՍԵՔԻ ՄԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԿՅՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութենէն աղբիւր մը ՍԱՍԱ-ին հարողեց, որ Սուրիոյ Հանրապետութիւնը խստիւ կը դատապարտէ Իսրայէլի վարչապետ Բենիամին Նաթանիահուի պաղեստինեան արեւմտեան բաժինէն հողատարածք մը Իսրայէլին կցելու որոշումը: Հողորդագրութեան համաձայն, այդ որոշումը միջազգային օրէնքի խախտում կը համարուի:



Աղբիւրը անելցուց. «Սուրիա պիտի շարունակէ գորակազ կանգնիլ Պաղեստինի ժողովուրդին՝ մինչեւ երկրի ամբողջական ազատագրումն ու հռչակուիմը անկախ պետութեան, որուն մայրաքաղաքը պիտի ըլլայ Երուսաղէմը»:



Խմբագրական

ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԳՕՏԻ... ՈՐ ԿՈՂՄԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Սուրիոյ հիւսիսային սահմանին վրայ ապահովական գոտի հաստատելու թուրք-ամերիկեան փորձը յիշեալ երկիրներու արտաքին քաղաքականութեան եւ ազդեցութեան գոտիի ընդլայնումին նպաստող համաձայնութիւն մըն է, որ իրականութեան մէջ Սուրիոյ ժողովուրդին ու անոր բազմերանգ ընկերութեան ոչ մէկ մասնիկին ապահովութիւնը պիտի երաշխաւորէ: Ընդհակառակը՝ ապահովական գոտիին հաստատումով մշտապէս թիրախ պիտի դառնայ Սուրիոյ ժողովուրդը, որովհետեւ ապահովական գոտիին հաստատումը օտար ուժերու սուրիական տարածքներ թափանցումը պիտի ամրագրէ, առանց հաշուի առնելու բնիկ ժողովուրդին կամքը, կարծիքն ու ապահովութիւնը:

Սուրիա, բնականաբար, կտրականապէս պիտի մերժէր իր հողերուն վրայ, իր հողերուն շուրջ նման սակարկութիւններն ու ոտնձգութիւնները, Սուրիոյ գերիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը անտեսող թուրք-ամերիկեան այս համաձայնութիւնը:

Սուրիոյ հիւսիսային շրջաններու բարդ կացութիւնը պիտի մեղմանա՞ր թրքական ուժերու թափանցումով, թրքական ներկայութիւնը ապահովական երաշխիք պիտի դառնայ Սուրիոյ հիւսիսային շրջանի քիւրտ, արաբ, քրիստոնեայ ողջ բնակչութեան համար: Իրականութիւնը հակառակ պատկերը պիտի պարզէ՝ պիտի վտանգուի երկրի հիւսիսային շրջանն ու տեղւոյն բնակչութեան ապահովութիւնը:

Թուրքիա սուրիական տագնապի սկզբնական շրջանի իր նախնական ծրագիրը չյաջողեցաւ իրագործել ու ապահովական գոտի մը հաստատել՝ հասնելու մինչեւ Զալէայ, օսմանեան իր երազներու գէթ մէկ մասը իրականացած տեսնելու եւ քրտական գործօնի ազդեցութենէն ձերբազատելու համար, բնականաբար Սուրիոյ ժողովուրդին հաշուոյն: Զիմա, ան ի գործ կը դնէ երկրորդ ծրագիրը, առնուազն Սուրիոյ եւ Իրաքի հիւսիսային կարգ մը շրջանները իր վերահսկողութեան տակ առնելու, միաժամանակ գոհացում տալու իսրայելեան հեռանկարներուն, հատել փորձելով Իրանէն Սուրիա, ապա Լիբանան հասնող ազգային դիմադրութեան առանցքը:

ԱՄՆ կը փորձէ համաձայնութեան եզր մը գտնել երկու թշնամիներու՝ թուրքերու եւ քրտական կարգ մը միաւորներու միջեւ, պարզապէս իրանեան ազդեցութենէն զերծ պահելու այդ շրջանները: ԱՄՆ չէ հետաքրքրուած ո՛չ քրտական հարցով, ո՛չ Թուրքիոյ, ոչ ալ Սուրիոյ ապահովութեան երաշխիքներով: Ան պարզապէս իր արտաքին քաղաքականութեան յաջողութեան երաշխիքները կ'որոնէ:

ԱՄՆ եւ Թուրքիա մինչեւ օրս տարակարծիք են ապահովական գոտիի սահմաններուն եւ խորութեան շուրջ իսկ: ԱՄՆ կը նախատեսէ սուրիական հողերուն վրայ 15 քմ. խորութեամբ ապահովական գոտի հաստատել, մինչ Թուրքիա՝ 30-40 քմ., միեւնոյն ժամանակ պահանջելով թրքական զինուորական ուժերուն ներկայութեան ապահովումը Սուրիա-Թուրքիա սահմանի երկայնքին:

Թրքական այսպիսի ներկայութիւն մը ոչ միայն ապահովական երաշխիք չի հանդիսանար Սուրիոյ ժողովուրդին համար, այլեւ Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը կը վտանգէ:

Նման ոտնձգութիւն բնականաբար պիտի մերժուի ոչ միայն Սուրիոյ պետութեան, այլեւ ժողովուրդին կողմէ: Այն ժողովուրդին, որ վերջին տարիներուն ականատեսը դարձաւ սուրիական պատերազմին Թուրքիոյ չարաղետ միջամտութեան, որուն հետեւանքով Սուրիոյ բնակչութեան ողբերգութեան՝ հիւսիսային շրջաններէն մինչեւ հարաւ, արեւելք ու արեւմուտք:

Սուրիոյ հիւսիսային շրջանի բնակչութեան ապահովութեան միակ երաշխիքը սուրիական բանակն է: Երկրի բնակչութեան բոլոր շերտերուն ապահովութեան պիտի հսկէ ոչ թէ օտարը, այլ՝ երկրին օրինական բանակը, պետութիւնը:

Իւրաքանչիւր քայլ, որ կ'անտեսէ կամ ետ կը մղէ սուրիական բանակը, կը նպաստէ թրքական ծրագրերուն:

Ռուսիա-Սուրիա համակարգուած պաշտպանողական համակարգն է, որ հարցերուն լուծման ազդանշանը պիտի տայ վերջաւորութեան, նկատի առնելով գերտերութիւններու քաղաքական շահերը, միաժամանակ վերականգնելով տարածաշրջանի մէջ Սուրիոյ ռազմաքաղաքական դերակատարութիւնը:

Յառաջիկայ օրերուն կարճաժամկետ բախումներ կրնան տեղի ունենալ Սուրիոյ հիւսիսային սահմանին վրայ, սակայն այս բոլորը բանակցութիւններու նախապատրաստութեան պիտի ծառայեն պարզապէս:

«Գ.»

-Սուրիոյ Արտաքին գործոց նախարարութենէն աղբիւր մը ԱՄՆ-ին հաղորդեց որ. «Սուրիա խստիւ կը դատապարտէ Ճեզիրէի շրջանին մէջ թուրք-ամերիկեան միացեալ սպառազինումը, զայն համարելով միջազգային օրէնքին եւ Սուրիոյ Զանապատեան եւ տարածքային ամբողջականութեան խախտում»:



Մինչ այդ, Թուրքիոյ Պաշտպանութեան նախարարութիւնը հանդէս եկած էր հաղորդագրութեամբ մը, յայտնելով որ. «Ըստ համաձայնութեան, Կիրակի առաւօտեան թրքական իրաւասլէրը ուղղուած են Թէլ Ապիատ եւ անոր շրջակայքը»:

Միւս կողմէ, թուրք-ամերիկեան պահանջին անսալով, ԶԱՄՏ-ի սուրիական ժողովրդավարական ուժերը պատրաստակամութիւն յայտնած են իրենց կարելին ի գործ դնել ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ համաձայնութիւնը յաջողութեամբ պսակելու համար:



Անոնք այս ծրագրին գործնական աջակցութիւն ցուցաբերելու պատրուակով ոչնչացուած են շրջանի իրենց թաքստոցներն ու զենքերը եւ սկսած քիւրտ զինեալները դուրս բերել Թէլ Ապիատէն եւ Ռաս ուլ Այնէն:

-Մինչ սուրիական բանակը կը շարունակէ երկրին հիւսիսային շրջանին մէջ զինադադարի որոշումը գործադրել, զինեալ ահաբեկչական խումբաւորումներ պատրաստակամութիւն չեն ցուցաբերել զինադադարը յարգելու, ինչ որ սուրիական բանակը կը մղէ ինքնապաշտպանութեան եւ յառաջիկայ քանի մը օրերուն ընթացքին զինադադարի արդիւնաւորման համար այլ միջոցներու որդեգրման:



Յամայի մէջ «Ուաթան»ի թղթակիցը յայտնեց, որ սուրիական բանակը հրթիռակոծած է Իտլիպի հարաւային եւ հարաւարեւելեան շրջանի ճարճամագ, Մաարշմարին, ալ Թահ, Թալմանաս գիւղերուն մէջ «Ճապիաթ ալ Նուրա»ի զինեալ ահաբեկչական խմբաւորման այն կեդրոնները, որոնցմէ շարունակաբար կը հրթիռակոծուի խաղաղ բնակչութիւնը:

-Երկուշաբթի, 9 Սեպտեմբեր 2019-ին, Արաբական Լիկայի 152-րդ նիստին ընթացքին, Արաբական Լիկայի Իրաքի դեսպան Ահմատ Նայէֆ ալ Տլէմի պահանջեց Սուրիոյ Արաբական Լիկա վերադարձը:

Տլէմի շեշտեց. «Ներկայիս տարածաշրջանը իրարայաջորդ մարտահրաւերներ կը դիմագրաւէ, ուստի մեզմէ կը պահանջուի արաբական երկիրներուն մէջ տեղի ունեցած հարցերու լուծման ուղղութեամբ լուրջ քայլերու ձեռնարկել»:

Իր կարգին, Սուրիական-եգիպտական Բարեկամութեան Միութեան նախագահը շեշտեց, որ Սուրիոյ Արաբական Լիկա վերադարձը անհրաժեշտ է, օրին անոր անդամակցութեան անտեսումը սխալ որոշում էր:

Տիկին Նագեյի Ազեզեան եւ Չաւակունց Տիկին Անի Ազեզեան եւ Չաւակունց

Իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն՝ Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մասիս Ս. Եպս. Չօպուեանին, Զահանայից Դասուն, Թեմի Ազգ. Վարչութեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղականութեան



Եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, հեռաձայնով, համացանցով, ցաւակցական գիրերով կամ նուիրատուութեամբ մասնակից դարձան իրենց զակին, ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին,

ՅԱՆԳՈՒՅԵԱԼ ԳԵՈՐԳ Ա. ԱԶԷԶԵԱՆԻ

մահուան սուգին: Զանգուցեալին մահուան քառասունքի Զոգեհանգստեան Պաշտօնը տեղի պիտի ունենայ Կիրակի, 29 Սեպտեմբեր 2019-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:30-ին, յաւարտ Ս. Պատարագին:

Յիշատակն Արդարոց Օրինութեամբ Եղիցի: ԾԱՌՕԹ. \*Ցաւակցութիւնները կ'ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս: Ներկայս ընդունիլ իբրեւ անձնական հրաւեր:



ՊԱԽԹԵՆԱՆԵԱՆ ՏԻՒԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐԴԻԻՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՍԻՆ



«Ապառաժ».- Կրկնապատկերված մեջ տեղի ունեցած Տեղական Ինքնակառավարման Մարմիններու ընտրություններուն ԶՅԴ-ի սատարած 80 թեկնածուներուն մեծամասնությունը ընտրուած է, յատկապէս՝ գիւղական շրջաններուն մէջ:

«Ապառաժ».- ԶՅԴ Արցախի ԿԿ-ի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան անդրադարձած է Արցախի մէջ տեղի ունեցած ՏԻՒ-ի ընտրություններու արդիւնքներուն: «Կ'ողջունենք Արցախի մէջ տեղի ունեցած Տեղական Ինքնակառավարման Մարմիններու ընտրությունները, որոնք ընթացան ժողովրդավարական եւ ազատ պայմաններու մէջ: Վստահ ենք, որ այս ընտրությունները մեր երկիրը մէկ քայլ եւս առաջ պիտի տանին որպէս կայացած պետություն եւ աւելի պիտի ամրապնդեն ժողովրդավարական հիմքերը: Ընտրությունները ցոյց տուին, որ մեր ժողովուրդը կրնայ գերծ մնայ բոլոր տեսակի պառակտումներէ եւ առաւել միասնական ոգիով շարունակել երկրի զարգացման ուղին», ըսած է Իշխանեան:

Լուրեր Հայաշխարհէն

ԱՐՅԱՆ. ԶՅԴ-Ի ՍԱՏԱՐԱԾ 80 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ԸՆՏՐՈՒԱԾ Է



Ըստ Արցախի Զանրապետութեան Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի տուեալներուն, Ստեփանակերտի մէջ ծայրերուն մեծամասնությունը ստացած է քաղաքապետի թեկնածու Դաւիթ Սարգսեան, Շուշիի մէջ՝ Արծուիկ Սարգսեան, Ասկերանի մէջ՝ Սամուէլ Աղաջանեան, Մարտունիի մէջ՝ Զայկ Սարգսեան, Մարտակերտի մէջ՝ Միշա Գիւրջեան, Զաղրուբի մէջ՝ Վահան Սաւաղեան, Բերձորի մէջ՝ Նարեկ Ալեքսանեան, Քարվաճառի մէջ՝ Սերգէյ Զիլինգարեան:

Դաշնակցութեան սատարած թեկնածուները յաղթանակներ արձանագրած են Արցախի Աշան, Կաղարծի, Պառաւաթումբ, Զացի, Ննգի, Դրախտիկ, Աւետարանց, Ծովաձոր, Քաշունիք, Գիշի, Չարեքտար, Նոր Էրքէշ, Զաւսաթաղ, Թաղավարդի եւ կարգ մը այլ շրջաններու մէջ:

Քաջաթաղի շրջանի Աղաւնօ գիւղի համայնքապետ ընտրուած է Գամիշլիի ծնունդ, հայրենադարձ, ԶՅԴ-ի անդամ Անդրանիկ Զաւուշեան, որ Լիբանանէն ներգաղթած է հայրենիք, երկար տարիներ է վեր կը բնակի Արցախ եւ մասնակցած է Արցախի քառօրեայ պատերազմին: Ան այժմ կը զբաղի հողագործութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ 4,8 ՈՒՃՂՆՈՒԹԵԱՄԲ ԵՐԿՐԱՇԱՐԺ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ Է

«Երկիր».- 10 Սեպտեմբերին, տեղական ժամով 20:22-ին (Կրիկի-էի ժամով 16:22-ին) Արտակարգ Իրավիճակներու Նախարարութեան Երկրաշարժային պաշտպանութեան ծառայութեան ցանցի կողմէ հիւսիսային լայնութեան 41.080 եւ արեւելեան երկայնութեան 43.940 աշխարհագրական համակարգ գիծերով (Զայաստան-Վրաստան սահմանային գօտի՝ Բաւրա գիւղէն 13 քմ. հիւսիս-արեւելք), օճախի 10 քմ. խորութեամբ, 4,8 ուժգնութեամբ երկրաշարժ արձանագրուած է:

Կեդրոնային գօտիին մէջ ստորգետնեայ ցնցումին ուժգնությունը կազմած է 6-7 բալ: Նախնական տուեալներուն համաձայն, երկրաշարժը զգացուած է ԶԶ Շիրակ, Լոռի, Տաւուշ, Արագածոտն, Արմաւիր մարզերուն եւ Երեւանի մէջ: Երկրաշարժին հետեւանքով ԶԶ տարածքին զոհեր եւ անբերան արձանագրուած:



Ծոտն, Արմաւիր մարզերուն եւ Երեւանի մէջ: Երկրաշարժին հետեւանքով ԶԶ տարածքին զոհեր եւ անբերան արձանագրուած:

ՈՒՍՏԱԳՆԱՃՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԱՂԹԱՄԱՐ



Ուրբաթ, 6 Սեպտեմբերին, նախագահութեամբ Պոլտոյ պատրիարքական տեղապահ Սահակ Եպս. Մաշալեանի Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ ուխտագնացությունը սկսած է: Տեղապահ սրբազանը Շաբաթ յետմիջօրէին այցելություն մը տուած է Վանի կուսակալին, որ ուրախություն յայտնած է, թէ այս տարի կրկին առիթը կը ներկայանայ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ Ս. պատարագ մատուցանելու եւ մեկտեղուելու Վանի մէջ:

Սրբազանը այցելած է նաեւ Վանի նորակառոյց թանգարանը եւ տեղւոյն գիտաշխատող Աթիլա Կեօքի առաջնորդութեամբ տեսած է հարուստ հաւաքածոն:

Մինչ այդ, արդէն իսկ Վան հասնիլ սկսած են ուխտաւորներ: Այս ուխտաւորները նախապէս այցելած են Կարս եւ յարակից շրջաններ, ապա եկած են Վան՝ մասնակցելու Աղթամարի արարողութեան:

Կիրակի առաւօտեան տեղի ունեցած է պատարագը, որուն ներկայ գըտնուած են Վանի կուսակալը, Ատանայի մօտ Միացեալ Նահանգներու հիւպատոսը, Կեւաշի քաղաքապետը, գաւառապետը, մշակոյթի նախկին նախարար Կիւնայ եւ այլ պաշտօնատարներ:

Պատարագի ընթացքին կատարուած է յիշատակություն հայ եկեղեցւոյ եւ մասնաւորապէս Աղթամարայ երբեմնի կաթողիկոսութեան հանգուցեալ սպասաւորներուն: Յիշատակուած են Ս. Խաչ տաճարի կառուցման բարերար Գագիկ Արծրունի թագաւորը, տաճարի ճարտարապետ Մանուէլ ճարտարապետը, Աղթամարի մէջ գահակալած Ամենայն Զայոց կաթողիկոսները, Մեծի Տանն Աղթամարայ կաթողիկոսները եւ համայն միաբանները Աղթամարի Աթոռոյն, Վանի երբեմնի Թեմի եւ հանգուցեալ համայն հաւատացեալները:



**ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԶԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՅ ԳԱԻԹԻ ԶՈՅԳ ԴՈՆԵՐՈՒ ՕԾՈՒՄ**

Ուրախութեամբ կ'ուզենք տեղեկացնել մեր հաւատացեալ ժողովուրդին, որ Կիրակի, 15 Սեպտեմբեր 2019-ին, Խաչվերացի տօնին առիթով Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ եւ քարոզէ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ

**ԳԵՐՇ. Տ. ՄԱՍԻՍ ՍՐԲ. ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆ**

Յընթացս պատարագին տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ գաւիթի նոր դռներուն օժման արարողություն:

Սկիզբ ժամերգութեան՝ 9:00-ին  
Ս. եւ Ամմահ պատարագ՝ 10:00-ին

Զրաւիրուած էք օրհնաբեր հանդիպումին ներկայ ըլլալու եւ օրուան խորհուրդով վերանորոգուելու:

**Թաղական Խորհուրդ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ**





### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ «ՀՄԱՅՔԸ»

#### Արտակ Սարգսեան

Գործող իշխանութիւններն ու նրանց առաջնորդը շատ են խօսում «թաւշեայ յեղափոխութեան» որեւէ արտաքին ուժի աջակցութեան բացառման մասին: Այս թեզը չի կարող ճշմարիտ լինել մի շարք պատճառներով: -

1. Նախ՝ ոչ-ազգային դրամագլուխէ սնուող կազմակերպութիւնների, շարժումների ու աղանդաւորական կառույցների գերակշիռ մասը լծուել էին «յեղափոխութեան» յաղթանակին: Այսօր էլ նրանց հիմնական մասը հանդիսանում են գործող իշխանութիւնների յենարանը:

2. Փաշինեանի գործունէութեան տեղեկատուական ապահովումը քայլերից ի վեր շարունակուել են իրականացնել, հիմնականում, ոչ-ազգային դրամագլուխէ սնուող լրատուամիջոցները:

3. Ակնյայտօրէն Հայաստանում ազդեցութեան համար բախուող աշխարհաքաղաքական հիմնական խաղացողների կայսերական շահերը չէին կարող «քնած» լինել այսպիսի հուժկու ժողովրդային ալիքից առաջ, ընթացքում էլ յետոյ. աւելին, որեւէ լուջ երկիր ու շարժում ուղղակի չէր կարող չհաշուարկել այս հնարաւորութիւնն ու չօգտուէր դրանից:

4. Վերջին 20 տարիների ընթացքում հայաստանեան քաղաքացիական շարժումները հասունացնում էին երկրում փոփոխութիւնների իրականացման մթնոլորտը, իսկ այս շարժումներն ու նրանց թիկունքում կանգնած ֆինանսաւորողները, հիմնականում, տարաբնոյթ արտաքին ուժերն են. նրանք իրենց նպատակների իրագործման բուն պահին ուղղակի չէին կարող չէզոքանալ՝ ի չիք դարձնելով ներդրումներն ու ջանքերը:

Հայաստանը, աշխարհաքաղաքական առումով, սահմանային երկիր է եւ անպատկերացելի է, որ կայսերական շահերը, չգիտես ինչու, մի կողմ պետք է քաշուէին ու թողնէին, որ իրադարձութիւնները գարգանան ինքնին՝ բացառապէս հայկական օրակարգով: Անկայունութիւնը փոփոխութիւնների հիմնական միջոցն ու միջավայրն է եւ ժամանակակից համայնական աշխարհում որեւէ փոփոխութիւն չի մտում աննկատ ու անտէր. եթէ նոյնիսկ արտաքին ուժերն այն չեն իրաւորում, փորձում են օգտագործել իրենց շահերի համար:

Հայաստանի անկայունութեան «հմայքը», ակնյայտօրէն, ունի աշխարհաքաղաքական բնոյթ՝ ուղղուած Ռուսաստանի եւ Իրանի դէմ: Այն, սակայն, մատուցուեց, ներքաղաքական հասունացած դժգոհութեան տեսքով: Միաժամանակ երկրում փաստացի տեղի ունեցաւ քաղաքական սերնդափոխութիւն՝ Ար-

ցախեան շարժման սերնդին փոխարինելու եկան քաղաքացիական ակտիւիստներն ու լրագրողները: Զառուրդ դարը մէկ նման սերնդափոխութիւնն օրինաչափ է եւ, եթէ այն չի կատարում վերելից՝ կամուկին, ակնյայտօրէն տեղի է ունենում ներքելից՝ պարտադրուած:



Բարեբախտաբար, շարժման նախագծողներն ու առաջնորդները մի բան շուտ հասկացան. եթէ Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշումների նաւը փորձեն կտրուկ շրջել, ապա դա կը լինի քաղաքական կողմնակցութեան հիմնական կռուանն ու տարածաշրջանում եւ աշխարհում եական գործօն լինելու հանգամանքը: Ինքնիշխանութեան կորստի պարագայում, Հայաստանը կը դառնայ ռուսական մարզ կամ կը յօշոտուի թուրք-ատրպէյճանական ներխուժման արդիւնքում: Այս բեմագրութիւնները, սակայն, ձեռնտու չեն որեւէ մէկին. առաջին բեմագրութեան պարագայում Արեւմուտքը, Թուրքիան ու Իրանը երկար ժամանակով կը գրկուեն Կովկասում դերակատար լինելու հանգամանքից, իսկ երկրորդի պարագայում՝ տարածաշրջանում կը ձեւաւորուի թուրքական միաձոյլ միջավայր, որը կը վերաճի համաշխարհային նոր աղէտի՝ սպառնալով տարածաշրջանում խաղաղութիւնը երկրորդներին, նոյնիսկ Չինաստանին:

Հայաստանի պարագայում որդեգրուեց, այսպէս կոչուած, «թաւշեայ» անցման տարբերակ՝ որպէս միջանկեալ փուլ: Ամերեյոթ, Հայաստանը որեւէ արտաքին քաղաքական շրջադարձ չկատարեց եւ աշխարհին փորձում է համոզել այս թեզի ճշմարտացիութիւնը, սակայն

ձեւաւորեց ԱԺ եւ կառավարութիւն, հիմնականում, արեւմտեան կողմնորոշում ունեցող քաղաքացիական ակտիւիստներից ու գործիչներից: Շարժման թիկունքում, ակնյայտօրէն, ռուսական հետք չկայ եւ դա է պատճառը, որ Փաշինեանն ու նրա խումբը մեծ ջանքեր են թափում

ռուսներին համոզելու, որ իրենք շարունակում են գարգացնել հայ-ռուսական դաշնակցային յարաբերութիւնները: Այս իրավիճակն ունի եւ՝ դրական, եւ՝ բացասական կողմ: Դրականն այն է, որ Հայաստանը փորձում է հակակշռել ռուսական ազդեցութիւնը, մեծացնել սուբիւտայնութիւնը (ենթակայութիւն - «Գ.») եւ Արեւմուտքի հետ փոխյարաբերութիւններին յաւելել գործիքակազմ ու հնարաւորութիւններ առաջարկել: Իսկ բացասականն այն է, որ Ռուսաստանը, յաճախ չէ, որ գործում է Արեւմուտքի «թաւշեայ» տրամաբանութեամբ. Արեւմտեան գործիքակազմի մէջ գերակշռող է հասարակութիւնների մէջ ներթափանցումն ու համակիրների լայն եւ աշխոյժ ցանցի ստեղծումը, որոնք անհրաժեշտութեան պահին հասարակութիւնը կարող են «պայթեցնել» ներսից: Ռուսական զինանոցում սուինն է եւ այն գործի է դրում, երբ իրավիճակը սպառնում է դառնալ անվերահսկելի: Ռուսական կայսրութիւնը զէնքի նկատմամբ միշտ ունեցել է առանձնայատուկ պաշտամունք եւ նրա, այսպէս կոչուած, «գաղափարական իմպերիալիզմը» (կայսերապաշտութիւն - «Գ.») կարճ յաջողութիւն ունեցաւ միայն խորհրդային դրօշով: Այն, սակայն, պարտուեց Արեւմտեան լիպերալիզմին (ազատականութեան - «Գ.») դէմ:

Ռուսական ռազմակայանի առկայութեան, Արցախեան հարցի գոյութեան եւ կիսաշրջափակուած լինելու պարագայում, Հայաստանի արտաքին կողմնորոշումների փոփոխութիւնն ուղղակի արկածախնդրութիւն կը լինէր՝ սպառնալով երկրի ազգային անվտանգութեանը: Սակայն վտանգաւոր գօ-

տում յայտնուեցին հայ-ռուսական յարաբերութիւնները: Սա Հայաստանի համար ունի ապակայունացման մեծ ներուժ, քանզի երկար ժամանակ չի կարող երկիրը գտնուել անվտանգութեան մէկ համակարգում, իսկ իշխանութիւններն ունեւան հակառակ կողմնորոշումն ու ազդուէն այլ կեդրոններից:

Հայաստանեան փոփոխութիւններն ուղղուած են նաեւ Իրանի դէմ: Եթէ Արեւմուտքն ու ԱՄՆ-ն որոշեն Իրանի դէմ պատժամիջոցներից անցնել ռազմական գործողութիւնների, ապա նրանց համար Հարաւային Կովկասը պետք է լինի հաւատարիմ յենակետ: Վրաստանում, այս առումով կարծես խնդիրները նուազ են, Ատրպէյճանում այս գիծն առաջ են մղում Իսրայէլի ձեռամբ՝ ռազմարդիւնաբերական արդիական համալիրների ներդրման, ռազմական հրահանգիչների եւ Իրանի տարածքը անօդաչու սարքերով հետախուզելու միջոցով: Հաշուի առնելով Հայաստանի զգայուն իրավիճակը, այստեղ այն կը փորձեն գործադրել «թաւշեայ» իշխանութիւնների ձեռքով: Պարտադիր չէ, որ յաջողեն, բայց որ փորձում են եւ կը շարունակեն փորձել, ակնառու է ու տրամաբանական:

Այսպիսով, ակնյայտ է, որ Հայաստանեան «թաւշեայ յեղափոխութիւն» ունի արտաքին ազդեցութիւնների մեծ զինանոց եւ այն շարունակում է յղկուել, փորձարկուել ու գործադրուել՝ Հայաստանին միանելով նոր մարտահրաւերների դաշտ: Սա Արեւմուտքի պատասխանն էր Հայաստանի նախորդ իշխանութիւններին եւ Ռուսաստանին՝ մէկ օրում ԵՄ անդամակցութիւնից ԵԱՏՄ անդամակցութիւն շրջադարձ կատարելու համար:

Այսպիսի անկայունութեան պարագայում անհնար է ապահովել արտաքին որեւէ լուրջ ներդրում, աւելին՝ խիստ վտանգաւոր են նաեւ ներքին ներդրումները. մարդիկ սպասումների եւ անորոշութեան մէջ են յայտնուել, որն արտագաղթի եւ դրամագլուխների արտահոսքի համար մեծ վտանգներ է պարունակում: Փաստօրէն՝ Հայաստանի նոր իշխանութիւնը յայտնուել է ներքին եւ արտաքին խնդիրների տեղատարափի տակ, որի լուծումը փորձում է կոծել կամ յետաձգել՝ դրանք հանրութեանը «վաճառելով» ապագայի գունաւոր պատկերներով եւ անցեալի «սարսափելի» ժառանգութեամբ: Զատրային թոյլ ներուժն ու անփորձութիւնը կրկնապատկում են վտանգները՝ գործընթացների կառավարումը դարձնելով անարդիւնաւետ:

Իսկ իրական յեղափոխութիւնն առջեւում է, որն, իրօք կարող է ունենալ խիստ գունաւոր տեսք, եթէ ազգային ներուժը չվերագտնի իրեն ու այն չտանի հայկական պետականութիւնների արդիականացման հունով եւ անկայունացնող ուժերին չթելադրի իր կամքը:



# ԾԱՆՈՐ ԶՔԵԶ, ՍՓԻԻՄՔ

Խաչիկ Տեր Ղուկասեան

Յեղասպանութեան հետեւան-ըով եւ Գայաստանի խորհրդայնացումէն յետոյ, համայնքային կազմակերպումը աշխարհացրի հայութեան, որ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ինքզինք ճանչցաւ որպէս Սփիւռք, իր գոյապայքարը իմաստաւորեց եռակի յարացոյցով մը՝ վերապրում, հայապահպանում եւ հայրենադարձութիւն:

Զաղաքականապէս իրարու հակադրուած, համայնքային դեկավարման համար իրարու հետ մրցակից եւ գաղափարախօսական, թէ այլ բնոյթի հարցերով շարունակական բախման մէջ ըլլալով մէկտեղ, համայնքային կազմակերպութիւնները իրենց կառոյցներուն ճամբով իրարայաջորդ սերունդներու հայեցի ինքնութեան դաստիարակութիւնը հիմնաւորեցին ազգային ինքնաճանաչման այս երեք տիրապետող մտքերով՝ անկախ անոնցմէ իւրաքանչիւրին գործնականացման տարբերութիւններէն: Սփիւռքի այս մտապատկերը որոշմունեցաւ 1920-70-ական թուականներուն, ցեղասպանութենէն յետոյ իրարայաջորդ երեք սերունդներու ազգային ինքնութեան գիտակցութեան մէջ: 1965-1985 երկտասնամեակին ցեղասպանութեան ճանաչման ու Գայ Դատի հետապնդման քաղաքականացումն ու սփիւռքեան գործարժը Սփիւռքի յարացոյցի փոփոխութիւն չնշանակեց: Ընդհակառակը, կարելի է մինչեւ իսկ ըսել, որ ճակատագրական այդ տարիները, որոնք նաեւ Միջին Արեւելեան հայահոծ համայնքներէն դէպի Արեւմուտք մասսայական տեղաշարժի ժամանակաշրջան մը եղան, հասունացումն ու, միաժամանակ, տագնապն էին այդ յարացոյցին՝ առանց երբեք յստակ իմանալու թէ ինչն էր յաջորդելու անոր:

Պատմական իրադարձութիւնները իրենք բերին յարացոյցային փոփոխութեան մը (paradigm change) անհրաժեշտութիւնը:

Անկախադարձը եղաւ Արցախեան ազատամարտն ու 1991-ին Գայաստանի անկախացումը, երկու անկանխատեսելի իրողութիւններ, որոնք Սփիւռքի ազգային ճակատագրի ցարդ քիչ թէ շատ կայուն մտապատկերն ու հեռանկարը տակնուվրայ ըրին: Սփիւռքը, այնպէս ինչպէս հասկցուած էր քսաներորդ դարուն, կրնա՞ր իր գոյութիւնը նոյն իմաստաւորումով շարունակել: այս եղաւ լռելեան այն հարցումը, որ ինքզինք պարտադրեց, բայց հազիւ թէ հրապարակային բանավեճի համար օրակարգի դրուեցաւ, որովհետեւ Սփիւռքեան յարացոյցի վերջին տարրը՝ հայրենադարձութիւնը այլեւս բաղձանք չէր միայն այլ՝ կարելիութիւն: Սպասելիորէն, հետեւաբար, հայրենադարձութիւնը իր ամենալայն իմաստով՝ նիւթական ներդրումներէն մինչեւ Գայաստան հաստատուելու յստակ ծրագիր, վերածուեցաւ քաղաքականապէս ճշգրիտ մէկ եւ միակ հանրային դիսկուրսի (խօսակցութեան- «Գ.»):

Արցախեան ազատամարտի եւ անկախութեան առաջին տարիներուն առկայ հայրենադարձութեան խանդավառութիւնն ու կարելիու-

թիւնը հարցականի տակ չի դրուիր: Վկայ՝ ազատամարտին սփիւռքեան մասնակցութենէն մինչեւ երկրաշարժի աղետի օժանդակութիւնը, բայց նաեւ շատ մը սփիւռքահայերու համար, անհատ թէ ընտանիք, իրենց կեանքը Գայաստանի մէջ շարունակելու կամ վերսկսելու որոշում: Միաժամանակ, սակայն, քանակական իմաստով առնուազն,

կայն, պատճառ չէր որ Սփիւռքի նոր յարացոյցի մը մասին հարցումին քննարկման համարձակութիւնը բացառուէր մտաւորական շրջանակներու մէջ: Ընդհակառակը, ան պարտադրեց անցնող երեք տասնամեակներուն, որքան ալ որ ան մնաց շատ անելի սահմանափակ, իմա՛նակադեմական, քննարկումներու ոլորտին մէջ եւ մամուլը հազիւ թէ



երկրէն ընկերային ու տնտեսական պատճառներով արտագաղթի երեւոյթին աղետը հանրային ելոյթներու մէջ երբեք չհնչեց այնքան տիրական որքան հայրենադարձութեան հրաւեր-հրամայականը: Առնուազն մինչեւ որ Արամ Ա. Վեհափառը այդ ահագնագը, ի լուր հայրենի իշխանութեանց ու հայաշխարհին, հնչեցուց 2011-ի Գայաստան-Սփիւռք համաժողովին:

Աւելին, մինչ հայրենադարձութիւնը կը մնայ քաղաքական օրակարգի վրայ առանց տակաւին գըտնելու իր գործնականացման հետեւողականութեան երաշխիքը հանդիսացող ընկերատնտեսական ենթահողը, հայրենիքէն հիմնականօրէն տնտեսական պատճառներով արտագաղթը, որուն յաճախ կու տան շփոթ յառաջացող «նոր Սփիւռք»ի յառաջացում անունը, վերածուած է նոր մարտահրաւերի: Այս «հին» ու «նոր» բաժանումը, արտասահմանեան հայութեան գոյավիճակի ցարդ միակ յղացք ճանչցուած, Սփիւռքին թոյլ չի տար ինքնին արդէն բարդ սփիւռքեան ընկերային իրավիճակի ու ինքնաճանաչման անհրաժեշտ յստակութիւնը ունենալու, որպէսզի յստակ իմաստով նոր օրակարգի ծրագրաւորում տեղի ունենայ: Նման շփոթի ամենամեծ վտանգը Սփիւռքի ամենամեծ մարտահրաւերի՝ Արեւմտահայ մշակոյթի, լեզուամտածողութեան եւ Չարթօնքէն ժառանգուած ու ցեղասպանութեամբ ընդհատուած քաղաքակրթութեան մը գարգացման յանձնառութեան արդիականացման հրամայականի նսեմացումն է:

Գայրենադարձութեան ճառախօսութեան բանաձեւուած եւ բարոյական պայմանաւորում յառաջացուած քաղաքական ճշգրտութեան նախանձախնդրութիւնը հրապարակային ելոյթներու մէջ, սա-

թիւնը, որ ոչ թէ Սփիւռքի հետ յարաբերութիւններու նոր հայեցակարգ ստեղծելու նպատակաւորուած էր, այլ՝ այդ ոլորտի լուծարումը նախապատրաստելու: Նախարարութեան փոխարինող նոր համակարգը որ Վարչապետի գրասենեակին հովանաւորութեան տակ է, սփիւռքեան հարցերու համապարփակ ծրագրի օրակարգ չունի. «հայրենադարձութիւնը» ղնելով որպէս նպատակ, եւ նկատի ունենալով ցարդ այն քանի մը նախաձեռնութիւնները, որոնք առնուած են նորանշանակ պատասխանատուներու կողմէ, ուշադրութեան կիզակետի վերածած են Ռուսաստանի հայութիւնը, «նոր սփիւռքը»: Գակնալի եւ տրամաբանական ուղղութիւններէն, եթէ նկատի ունենանք որ Գայաստանէն տնտեսական պատճառներով արտագաղթը հիմնականօրէն դէպի Ռուսաստան է եւ, հետեւաբար, հայրենադարձութիւնն ալ շատ հաւանաբար անոնց մօտ յաջողելու անելի կարելիութիւն ունի: Այս իմաստով հայրենի իշխանութիւններու քայլը որոշուելի է: Կը մնայ որ Սփիւռքն ալ այն ընկալէ որպէս wake-up call, եւ հայրենի իշխանութեանց սփիւռքեան քաղաքականութիւնը հասկնայ իր իրապաշտ սահմաններուն եւ կամաւոր որոշմամբ հաստատուած սահմանափակումներուն մէջ՝ առանց ինքնախաբերութեամբ տարուելու:

Բաղձալով հանդերձ որ հայրենադարձութիւնը վերածուի ակընբախ երեւոյթի, յստակ է որ սփիւռքեան գոյավիճակը 21-րդ դարուն պիտի շարունակուի: Խորքին մէջ, տակաւին հիւնդերորդ դարէն հայութեան համաշխարհային ներկայութեան պատմական փաստերը չեն պակսիր: Ծիշո՞ւ է, աշխարհացրի հայութիւնը երբեք չէ ունեցած ազգային քաղաքական ինքնութեան այն գիտակցութիւնը որ սփիւռքեան գոյավիճակը կը ներկայացնէ: Բայց եւ այնպէս հաւաքական ինքնութեան գիտակցութիւնը ինքնին եթէ նոյնիսկ ամբողջապէս չէ պայմանաւորուած պատմական ժամանակաշրջանի մը արժեքներով ու պահանջներով այդուհանդերձ կը գարգանայ ժամանակաշրջանի պայմաններու հետ փոխարաբերելով: Այս իմաստով, Սփիւռքը 20-րդ դարուն ծնած ու գարգացած գոյավիճակ է, իսկ Սփիւռքեան յարացոյցը պատմական այդ յատուկ ժամանակաշրջանին կազմաւորուած եւ իր գործնականութեան փաստը տուած է: Բայց 21-րդ դարուն պայմանները ոչ միայն փոխուած են այլեւ արհեստագիտութեան արագընթաց գարգացման բերումով փոփոխութեան ընթացքը արագացած է:

Սփիւռքի մէջ արդէն չորրորդ սերունդ մը հասակ առած է եւ ազգային-հաւաքական մարտահրաւերներու դիմագրուման պատասխանատուութիւնը ստանձնած է կամ ստանձնելու վրայ է: Արցախեան ազատամարտի ու անկախութեան սերունդին մասին է որ կը խօսինք, համացանցի ու բջիջայինի սերունդին մասին է որ կը խօսինք, այն սերունդին, որուն համար հայրենի-



ՆՈՐ ԳԻՐԵՆԵՐՈՒ ՅԵՏ

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿԿԱՅԱՐԱՆ ՄԸ ԵՄ

Վերջերս, Մոսկոյի մէջ լոյս տեսաւ բժիշկ Կարպիս Զարայեանի տրագոյն հատորը՝ «Խճանկարներ Զայկական Ցեղասպանութենէն» խորագիրով: Անկախ Թուրքիոյ պետութեան կողմէ յղացուած, կազմակերպուած ու գործադրուած ոճիրին տրագոյն վկայարանն է, որ լուսարձակի տակ կը բերէ որոշ ծալքեր եւ կը յստակացնէ, թէ պատմական ոճիրին իրականացումն ու հետեւանքները ինչպիսի՛ տարողութիւն ունէին եւ կը շարունակեն ունենալ:

Աւելի քան 500 էջերու վրայ տարածուող եւ մեծ թիւով լուսանկար-

ցիկ հիւանդութեանց ու անոնց դարմանումի միջոցներուն մասին: Վերջին տարիներուն, ան նաեւ ժամանակ գտած է պրպտումներ կատարելու ցեղասպանութիւնը իրականացողներու տարբեր «փաղակներուն» մասին եւ ցեղասպանութեան 100-ամեակէն ի վեր, մամուլին տրուած կամ անտիպ յօդուածներ լոյս կ'ընծայէ նաեւ հատորներով, նախ՝ խղճի պարտք մը կատարողի, ապա նաեւ նոր սերունդներուն յիշեցում կատարելու դերակատարութեամբ: «Խճանկարներ»ը նման շարքի մը չորրորդն է: Կը բացուի հեղինակին կողմէ բացատրականով



ներով հարստացած հատորը ամեն բանէ առաջ առատ առաղծ կը տրամադրէ ցեղասպանութեան ծալքերը ու սուսմասիրողներուն, ի յայտ բերելով ցեղասպանութեան անսահմանափակ տարողութիւնը, մինչդէռ հայկական թէ ոչ հայկական շրջանակներու մէջ անկախ առաւելաբար կը ներկայանայ 1.5 միլիոն հայերու ջարդի, հայկական հողերու բռնագրաւման ու անկէ հայութեան բռնի հեռացման՝ խորագիրներուն տակ: 28 գլուխ բովանդակող հատորը ծալք առ ծալք կը բանայ որոշ մանրամասնութիւններ, ցոյց տալու համար, թէ պետական վարչամեքենան ու պատասխանատուներ, բժիշկներ, կիներ, միւսնախնայ անգամ մանուկներ ու ժողովուրդի այս կամ այն խաւի ներկայացուցիչներ ուղղակի մասնակցութիւն բերած են պատմական ոճիրին իրականացման, ուրեմն, ընթերցողին անելի՛ հասկնալի կը դարձնէ կազմակերպուած ու կանխամտածուած ցեղասպանութիւն հասկացութիւնը:

Բժիշկ Կ. Զարայեանի հայ ընթերցողին տասնամեակներէ ի վեր ծանօթ է մամուլին մէջ լոյս ընծայած բժշկագիտական յօդուածներով, ինչպէս նաեւ «Բժիշկին հօսքը» խորագրեալ հատորներու շարքով, ուր գործնական գիտելիքներ կու տայ ընթացիկ եւ նուազ ընթա-

մը, ուր կը նշուի թէ հատորին բովանդակած յօդուածները բոլորովին անտիպ չեն, սակայն մամուլին մէջ նախապէս լոյս տեսածները ճիշտացումի եւ վերամշակումի ենթարկուած են, լուսաբանութիւն կու տայ տարբեր գլուխներուն մասին, կը նշէ, որ տարբեր ժամանակներու գրուած սակայն իրարանման կիւրծեր շօշափած բաժիններու միջեւ կըրկնութիւնները անխուսափելի էին, շնորհակալութեամբ խօսք կ'ուղղէ մեկեւսաին՝ Սոնա Մելվալեան-Կիրիւնեանին ու բոլոր աջակցողներուն: «Կյս գիրքը թող ըլլայ յուշարար մը Զայ երիտասարդ սերունդին, որպէսզի ան տեր կանգնի եւ հետապնդէ Զայ Դատը, ըլլայ պահանջատեր եւ չզիջի հայ ժողովուրդի արդար իրաւունքներէն՝ մինչեւ ամբողջական հատուցում», կ'եզրափակէ ան:

Սարգիս Մահտերճեան ունի յառաջաբան մը, որ կը նկատէ, թէ հեղինակին այս գործին բաժինները կը ներկայացնեն սեւ ու կարմիր, գորշ գոյներով խճանկարներ, որովհետեւ արտացոլացումն են ցեղասպանութիւն կոչուած պատմական ոճիրին: Ան լուսարձակի տակ կ'առնէ այս ու նման հատորներու տեղը՝ ցեղասպանութեան մասին ուսումնասիրական հատորներու շարքին, նաեւ իբրեւ վկայութիւն՝ անժամանցելի պահանջատիրութեան:

## Թուրքիոյ նուրջ

### ԲԸԼԸՏԱՐՈՂՈՒ «ԱԶԱԲԵԿԻՉՆԵՐՈՒՆ ԴԵՍ ԴԱՏԵՐԱԶՍ ՅԱՅՏԱՐԱՐԵԼԸ ՍՈՒՐԻՈՅ ԱՐԴԱՐ ԻՐԱՌԻՆԵՆ Է»

Թուրքիոյ Ժողովուրդի Զանրապետական Կուսակցութեան ղեկավար Զեմալ Զըլըճտարօղլու «Զայէրթուրք» թրքական պատկերասփիւռի կայանին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին հաստատեց, որ Սուրիա իրաւունք ունի պատերազմ յայտարարելու ահաբեկական խմբաւորումներուն դէմ երկրի բոլոր շրջաններուն՝ ներառեալ Իտլիպի մէջ: Ան Սուրիոյ մէջ ահաբեկական գործողութիւններու գլխաւոր պատասխանատուն Թուրքիոյ վարչակարգը համարեց, դիտել տալով, որ հազարաւոր զինեալ ահաբեկիչներ Սուրիա մուտք գործեցին Թուրքիոյ սահմանէն, նոյն ճամբով Զաթարն ու Մեուտական կիւրաքիւն, ԱՄՆ-ի գորակցութեամբ, զէնք ու զինամթերք մատակարարեցին զինեալ ահաբեկիչներուն:



Խօսելով Էրտողանի վարած քաղաքականութեան մասին, Զըլըճտարօղլու յայտնեց, որ Թուրքիոյ նախագահը թրքական տարածքներ ահաբեկական խմբաւորումներու դէպի Սուրիա հոսքին ծառայեցուց, երբեմն այդ տարածքները ապաստարան դարձուց այդ խմբաւորումներուն՝ նիւթապէս եւ զէնքի ու զինամթերքի հայթայթումով նեցուկ կանգնելով անոնց: Աւելին՝ Էրտողան ապօրինաբար ՏԱՅԵՇ-էն զնեց Սուրիայէն գողցուած քարիւղը:

Զըլըճտարօղլու քննադատեց Էրտողանի Սուրիոյ նկատմամբ վարած երկդիմի քաղաքականութիւնը, դիտել տալով, որ ան օր մը կը համաձայնի Ռուսիոյ նախագահին հետ, յաջորդ օրը հեռաձայնային հաղորդակցութեան մէջ կը մտնէ ԱՄՆ-ի նախագահին հետ, առանց արդարացնելու սուրիական տագնապի իրահրման իր նկրտումներն ու ահաբեկական խմբաւորումներուն ցուցաբերած անվերապահ օժանդակութիւնը:

Եզրակացնելով Զըլըճտարօղլու ըստ, որ Թուրքիոյ նախագահը կը կրէ Սուրիոյ ներկայ իրավիճակին եւ սուրիացիներու, յատկապէս Թուրքիա գաղթողներու, ողբերգութեան պատասխանատուութիւնը:

Ան անհրաժեշտ համարեց Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան ամբողջական փոփոխութիւնը եւ դրացի երկիրներուն, յատկապէս Սուրիոյ, Իրանի եւ Իրաքի հետ խաղաղ գոյակցութեան հիմքերու հաստատումը:

Զատորին 28 գլուխները կարելի է դասել քանի մը խմբաւորումներու մէջ: Առաջին յօդուածները ցոյց կու տան Թուրքիոյ պետական եւ ժողովրդային տարբեր «խաւերու» մասնակցութիւնը՝ ցեղասպանութեան. մասնակից են պետական պաշտօնեաներ, զինուորականներ, բժիշկներ, կիներ ու մանուկներ, ամբօրիւր, մէկ խօսքով՝ ո՛չ միայն ծրագրող պետութիւնը, այլ նաեւ ժողովուրդի լայն զանգուածները: Յաջորդ բաժինը լուսարձակի տակ կը բերէ բռնագաղթի ու ջարդերու հետեւանքով ստեղծուած հայկական գաղթաշխարհը ու մասնաւորապէս որբերուն վիճակը: Իրարայաջորդ գլուխներով անդրադարձ կը կատարուի Թուրքիոյ իշխանութեան ենթակա կարգ մը շրջաններու մէջ բացուած որբանոցներուն, ապա նաեւ անոնց Լիբանան տեղափոխութեան ու տասնամեակներ շարունակ այդ երկրին մէջ գործած որբանոցներուն: Երախտագիտական ու դրուատական էջեր արձանագրուած են որբահաւաք իրականացող ու որբերուն հոգատարութիւն

տրամադրող հայ թէ օտարական առաքելատիպ անձնաւորութեանց, դատապարտանք՝ որբերը թրքացնելու ծրագիրը իրականացող թուրքերու, որոնց ոճիրներուն վկայարաններէն մէկն ալ Այնթուրայի որբանոցին գերեզմանատունն է: Վերջին բաժինով, կան շարք մը վերապորոզներու վկայութիւններ, որոնց շարքին հեղինակին ընտանեկան հարազատներ, նշանաւոր հայ դէմքեր: Այս բաժինին մէջ կան նաեւ հայկական կարգ մը անուններու մասին պատմական ուսումնասիրութիւններ:

Զատորին բովանդակութիւնը աչքի առջեւ ունենալով, ընթերցողը պիտի նկատէ, թէ պատահական չէ, որ անկախ ձօն մըն է հեղինակին աներոջ ու գոթաւիչին, որոնք փորկուած են Ցեղասպանութենէն ու իրենց վերապրումով իսկ պատգամ մը ունին ընթերցողին, հայութեան արդար իրաւունքներուն պաշտպան նոր սերունդներուն:



## ՎԵՐԱԿԱՆՔՆԱԾ Է ԴԱՄԱՍԿՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՅԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԸ

ՍՈՒՐԻՈՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ԿԸ ԸՆԴՈՒՆԱԿԵՆ ԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՒՍԱԽՐԵԼ ՍԵՐՈՒՆՂՆԵՐՈՒՆ ՄԻՏՔԸ

Սուրիոյ մէջ 2019-2020 տարեշրջանի վերամուտը ուսումնական սովորական տարուան մը սկիզբը չ'ազդարարեր: Պատերազմի տարիներուն, ի պատիւ Կրթութեան Նախարարութեան եւ սուրիական կրթական համակարգին մէջ ծառայողներուն, սերունդներու ուսումը շարունակուեցաւ: Գանաձասարը համարուած էր Վարժարանի վերակազմակերպման համար: Պատերազմի պայմաններուն մէջ ապրող սերունդները «Լոյսը ընդդէմ

կառուցումն էս, ուր օժտուած է նաեւ միջնակարգ բաժինով:

**«Գ.»- Պատերազմի տարիներուն ինչպիսի՞ պայմաններու մէջ յայտնուած էր վարժարանը:**

**Ն. Ա.-** Երբ ահաբեկչական գործողութիւնները սաստկացան եւ այդ շրջանը յայտնուեցաւ բուն բախումներու մէջ, աշակերտութիւնը ստիպուած փոխադրուեցաւ նախկին շէնք, ուր դպրոցը իր կրթական



խաւարին» նշանաբանով շարունակեցին դպրոց յաճախել, գիտութեան լոյսով զօրանալ ու յոյսով նայիլ ապագային:

Շատ մը վարժարաններ քանդուեցան, սակայն վերանորոգումի աւետիքը չուշացաւ:

Այս իմաստով եզակի օրինակ մըն է Դամասկոսի Ազգային Միացեալ վարժարանի վերակազմակերպումը:

«Գանաձասար» կապ հաստատելով երեսփոխան դոկտ. Նորա Արիստակիսի հետ տեղեկացաւ, որ երեսփոխան դոկտ. Նորա Արիստակիսի խնդրանքին հիման վրայ, Սուրիոյ նախագահը Ազգ. Միացեալ վարժարանի վերակազմակերպման աշխատանքները ստանձնած է:

Յատկապէս մանրամասնութիւններ իմանալու համար հետեւեալ հարցումները ուղղեցինք երեսփոխան դոկտ. Նորա Արիստակիսին.

**«Գանաձասար»- Ե՞րբ հիմնուած է Դամասկոսի Ազգ. Միացեալ վարժարանը:**

**Նորա Արիստակիս.** Դամասկոսի Ազգային Միացեալ վարժարանը հիմնուած է 1929-ին, Դամասկոսի կեդրոնը, Սալիհի թաղամասին մէջ՝ որպէս մանկապարտեզ եւ նախակրթարան:

2010-ին փոխադրուած է Դամասկոսի արուարձաններէն Մլեհա շրջան, արդիական ոճով շէնքի մը

գործունեութիւնը շարունակեց ու մինչեւ օրս կը շարունակէ, հակառակ շէնքի աննպաստ պայմաններուն:

Պատերազմի շրջանին, վարժարանի նոր շէնքը թիրախ դառնալով հրթիռակոծումներու, վնասներ կրած ու անօգտագործելի դարձած էր: Դպրոցը կարիք ուներ ամբողջական վերակազմակերպումի:

**«Գ.»- Ե՞րբ աւարտին հասան նորոգութեան աշխատանքները, իսկ աշակերտութիւնն ու տնօրէնութիւնը ինչպէ՞ս դիմաւորեցին վերամուտը:**

**Ն. Ա.-** Վարժարանի վերակազմակերպման աշխատանքները աւարտած են եւ պէտք է ըսել, որ դպրոցի երկրորդական բաժինն ալ պատրաստ է, սակայն կեանքի կը կոչուի յառաջիկայ տարեշրջանին: Դպրոցի իւրաքանչիւր բաժին, դասարաններու կողքին, օժտուած է համակարգիչի սրահով, տարրալուծարանով, գրադարանով եւ անջատ բակերով:

Իսկ գետնայարկը կը կազմէ ընդարձակ սրահ մը՝ իր խոհանոցով, ինչպէս նաեւ մարզանքի, երաժշտութեան եւ բժշկական սրահներով:

Այս տարի աշակերտները վերամուտը սկսան դարձեալ նախկին շէնքին մէջ, սակայն որոշ դասաւորումներէ ետք, շուտով կը տեղափոխուին վերակազմակերպման նոր շէնք:

## ՄԺԵՂՆԵՐՆ ՈՒ ՄԵՆՔ ՆՈՐԳԻԴԷՆ ՆԵՐՍ



Նանար Պապեան-Քիլեճեան

Սուր գիշեր է. խաղաղ, հանդարտ, քնացած ենք. յանկարծ...

– Յակոբ, ե՛լ, ահա՛, ահա՛, գտայ, հոս է:

Թշնամիները յարձակած են եւ ահա ամենօրեայ գիշերային պատերազմը սկսած է: Տասնեակ մժեղներ ամենուրեք տարածուած կը խոյանան մեր վրայ:

Ես՝ ստորեւ ստորագրեալս, արծիւի աչքերով, սուր նկատողութեամբ մեր տան հմուտ մժեղ գըտնողն եմ, իսկ ամուսինս՝ օ՛, հանճարեղ դուրողը: Այսպէս տհաճ, վզզացող, խանգարիչ, վնասակար այդ արարածը սենեակին ո՛ր անկիւնն ալ ըլլայ վեր թէ վար, այ թէ ձախ աչքէս պէտք չէ փախչի, իսկ ամուսնոյս վարպետ հարուածէն՝ երբեք:

Իրականութեան մէջ, երբեմն կը մտածեմ, – մեղք չէ՞ սա մժեղը սատկեցուցինք: Խեղճս, ո՛վ գիտէ հայրն ու մայրը կամ գաւակները վերադարձին կը սպասէին, իր ալ իրաւունքն է մնանիլ, հապա ինչպէ՞ս ապրի, յետոյ ի՞նչ գիտես թէ այդ անտանելի վզզոցը, որ կը փշաքաղէ քեզ իր նախասիրած մեղեդին չէ, գոր կ'երգէ ուտելիք փնտռած ատեն:

Յանկարծ, – ի՞նչ անիմաստ բաներ կը մտածես, գլուխդ դի՛ր, քնացի՛ր, վաղը առտու կանուխ գործ ունիս, – կը մրթմրթամ:

Ընթերցողը պիտի հարցնէ, – Լաւ, ինչո՞ւ այսքան մժեղ, – իսկ ես կը պատասխանեմ, – ինչպէ՞ս չբազմանան մժեղները, երբ փողոցները նետուած այնքան աղբ հոս ու հոն կը կուտակուի: Ինչպէ՞ս չբազմանան մժեղները, երբ յորդած աղբամաններ տեղադրուած են բնակարաններուն ներքեւ, իսկ եթէ աղբամաններ գոյութիւն չունին, օ՛... մեր ժողովուրդը աղբերու հաւաքածոներ ստեղծելու տաղանդ ունի՞ թաղամասերուն անկիւնները, շէնքերուն մուտքին կամ ալ, ինչո՞ւ չէ, շէնքերուն մէջ:

Ձեզի կը ներկայացնեմ ապրուած կեանքէ հետաքրքրական դրուագ մը:

Գիշերուան տազնապալի քունէն ետք, առաւօտեան աչքերս շփելով կ'արթնանամ, գաւաթ մը սուրճ կը պատրաստեմ սթափելու նպատակով, անզգալաբար ոտքերս կը քաշեն զիս դէպի պատշգամ, յանկարծ երկու խոշոր աղբերով ողողուած սիրունիկ աղբամաններ լայն ժպիտով մը բարի օր կը մաղթեն ինծի, կողքին «ամփեր»ի շարժում մը, իր «ազնուական» կեցուածքով, «հմայիչ» ձայնով եւ «նրբիկ» ողորդիւնով որպիսութիւնս կը հարցնէ, իսկ եթէ պատահի, որ մեղմիկ գեփիւն մը փչէ եւ աղբամանէն սեւ կամ ճերմակ տոպրակներ աղաւթներու նման սաւառնին երկնքին մէջ,

ա՛յնքան բախտաւոր ես դուն:

Միջանկեալ, ի՞նչ է «ամփերը»:

Հալէպի ժողովուրդին հասկացողութեամբ, «ամփեր»ը այն ելեկտրականութիւնն է, գոր կը ստեղծուի վաճառականներու կողմէ ինչ-ինչ ձեւերով յայտնաբերուած շարժաններէն, փոխարինելու համար պետական «առատօրէն» տրուած ելեկտրական հոսանքը, կողպտելով ժողովուրդիս գրպաններէն «կոկիկ» գումարներ: Արժէ յիշել, թէ պետական հոսանքը նկատելի ձեւով բարելաւուած է, սակայն «ամփեր» ձեւերուն» ազախութիւնը՝ երբեք:



Շարունակեմ...

Առաւօտեան ժամը տասն է արդէն, երբ նստած այս մտորումներս կ'արձանագրեմ, յանկարծ կը ժամանէ աղբահաւաք հսկայական մեքենան՝ աղբամաններուն պարունակութիւնը պարպելու համար: Այսպէս, օդին մէջ տարածուած բուրուխաւետ անուշահոտը քիթիս մէջ մխրճուելով կարծես ուղեղս կը հարուածէ, խուճապի մատնուած կը փութամ դուռ-պատուհան գոցել, որ վեցամսեայ մանչուկս հոտէն չթունաւորուի:

Կը պատրաստուիմ գործիս ուղղուելու: Հագար՛ր փառք, որ երբ շէնքէս դուրս ելլեմ, կը հանդիպիմ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ եւ անոր ազնիւ պահակին, այնտեղ կը տեսնեմ «Կակաչ» մանկամտորի փոքրիկներն ու «Փեթակ» աշխատանոցի տիկիները: Աւելի վար՝ «Տիգրանեան» պարտեզն ու մուտքին կանգնած անձնագահ տղաքը, իսկ ներսը՝ ժիւր ու կայտառ երիտասարդներու ակումբը: Զայլ մը անդին՝ հանրածանօթ «Ժանօ»ն, ՍԵՄ-ի գրադարանը, այնտեղ քանի մը հայատեր խանութները եւ մանաւանդ Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի կանգուն շէնքն ու աշակերտութեան կենտրոնի ձայները ամենուրեք կեանք կը սփռեն: Այսպէս՝ հայաշունչ մթնոլորտը վերապրելու նպատակով արձանագրուած այս քայլերը, թաղեցիկներն ու մանաւանդ դրացիները բաւականաչափ կը մխիթարեն զիս, եթէ չըսենք կը յուսադրեն:

Շարունակեմ պատմութիւնս...

Գործատեղիս հասնելու համար պէտք է քայլեմ մզկիթ տանող ահռելի այդ ճանապարհէն, ուր կոտորուած մայրերէն եւ ցեխոտ ճամբաներէն անցնիլը մարմնային հեզաճ-



## ԴԻՏԱԿԻՆ

### ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿԸ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՌԱԶԱՊԱՀ



Խաչիկ Ծափինյան

Մարդկության սկզբնաղբուրթենն ի վեր գոյութիւն ունեցած է ուսման յղացքը իր գոյգ եզրերով՝ ուսանիլ եւ ուսուցանել: Այդ յղացքը կենսագործելու եւ արդիւնաւորելու առաջադրանքով մարդ էակը հանգրուանորէն գայն (այդ յղացքը) ենթարկած է փոփոխութիւններու՝



թելադրուած իր ժամանակի եւ միջավայրի պայմաններէն: Ուսումը՝ համաձայն հասարակութեան մեջ արմատաւորուած եւ ընդհանրացած գատորշումի մը, բաժնուած է երկու տեսակներու:

- Առաջին՝ առանց գիտական կազմակերպումի եւ նախաժրագրեալ մեթոտի կիրարկուող լայն ու տարտամ իմաստով ուսում մը: Այս առնչութեամբ յիշենք օրինակ՝ մարդկային փոխյարաբերութիւններու, շրջագայութեանց եւ հետագօտութեանց ընթացքին ինքնաբերաբար իրականացած որեւէ ծանօթացումի կամ ճանաչումի արարք:

- Երկրորդ՝ կազմակերպ կառոյցով ու գիտական մեթոտի մը հետեւողութեամբ յատկանշուող համակարգեալ ուսում, որ առհասարակ կ'իրագործուի ուսումնական յատուկ հաստատութիւններու կամ վարժարաններու երդիքին տակ՝ պատշաճ ծրագրերու մշակումով: Որպէս յղացք եւ իրագործում, ուսման այս երկրորդ տարբերակի գըլխաւոր հիմնասիւները կը կազմեն՝ ուսուցիչը, ուսանողը եւ կրթական ծրագիրը: Ներկայ յօդուածի գլխաւոր թիրախը, մտահոգութեան ու քննարկումի անմիջական եւ նախապատիւ առանցքը կը հանդիսանայ վերոյիշեալ երեք հիմնասիւններէն առաջինը՝ ուսուցիչը:

Մարդկային հաւաքականութեան կամ ընկերութեան մեջ ուսուցիչը միշտ ալ կենսական ու վճռորոշ դեր խաղացած է: Սակայն, ըլլալով հանդերձ առանձնայատուկ նկարագրի տեր կերպար եւ առաջնորդող անձնաւորութիւն, դժբախտաբար կրթական մշակին առհասարակ վիճակուած է ոչ ասպարեզակից կամ ոչ մասնագետ մարդոց տնօրինումին ենթակայ դառնալու անբարենպաստ ճակատագիրը, հանգամանք մը, որ պատճառ կը դառնայ այդպատասխանատուներուն կողմէ ուսուցչի մտահոգութեանց ու կարիքներուն անտեսումին, ինչպէս նաեւ անոր արժանիքներուն, թէ ստանձնած պարտականութեանց թիր ընկալումին ու ան-

համապատասխան գնահատումին, յաճախ գայն վերածելով խեղճ, անկշիռ ու անդիմագիծ մահկանացուի մը: Այսպէս, կրթական մշակը հասարակութեան կը ներկայանայ անկախօրէն գործելու կամ նախաձեռնելու, եւ ուրեմն՝ որոշակիօրէն ներգործելու անատակ, անկարող, թոյլ ու մեղկ անհատականութեան մը պահուածքով, մինչդէռ իր գործունեութեան արդիւնքը կրնայ կազմել եւ պետք է կազմէ քաղաքակրթութեան ու մշակութեան հաւաքականութեան մը կամ ընկերութեան մը ողջունելի էատարրը, խոնարհելի վաստակը:

Հայոց պատմութեան ողջ տեւողութեան վրայ յետադարձ ընդհանուր ակնարկով մը պիտի նկատենք ու հաստատենք, որ հայ ուսուցիչը տեւաբար գտնուած է յառաջապահ դիրքի վրայ: Արդարեւ, ընդհանրապէս ասպարեզով ուսուցիչ եղած են գրեթե գիւտի կերտիչներէն եւ առաջին թարգմանիչներու հոյլէն (Ս. Սահակ Պարթեւ, Ս. Մեսրոպ Մաշտոց եւ անոնց աշակերտները) սկսեալ մինչեւ գարթօնքի ռահվիրաներն ու հայ յեղափոխութեան մարդակերտ առաքեալները:


Մեր ազգային պատմութեան ամենաճգնաժամային ու ամենատագնապալի փուլերուն անգամ, հայ ուսուցիչը հանդէս եկած է որպէս պայծառատես ու լուսամիտ մարգարէ մը, որ հայ ժողովուրդի նահանջող եւ դէպի անկում ընթացող ճակատագրական կացութիւնը դիմագրաւած է վճռականօրէն ու արիաբար՝ ձեռնարկելով ոչ միայն յաւելեալ նահանջի եւ գահավիժումի առաջը առնող, այլ նոյնիսկ վերականգնում առաջադրող օգտակար ու կառուցողական միջոցառումներու:

Անտարակոյս, հայ ժողովուրդի վերածնունդէն, վերականգնումէն ու յառաջդիմութենէն տարբեր նպատակ չէին հետապնդեր մեր մեծագոյն ուսուցիչը՝ Մաշտոց, իր գրեթե հրաշափառ գիւտով, գարթօնքի սերունդը իր լուսաւորչական ու ազգային սահմանադրական աշխատանքով եւ գաւառներու այն սքանչելի բազում հայորդիները՝ ուսուցման եւ դաստիարակութեան միջոցով իրենց ողջ գիտութիւնն ու կորովը անմասցորդ կերպով նուիրաբերելով:

Իրար պայմանաւորող ու գիրար համալրող անբաժանելի երրորդութիւն մը կը կազմեն կանոնակարգ ու կազմակերպ ուսման հիմնական երեք բաղադրիչները՝ ուսուցիչ, աշակերտ եւ կրթական ծրագիր: Այսուհանդերձ, կազմակերպեալ ուսումնակրթութեան կերդոնական դէմքը կը հանդիսանայ ուսուցիչը, որովհետեւ որքան ալ կատարելագործուած կրթածրագրեր մշակուին կամ ներգրաւիչ դասագրք-

Շար. 12 14

## ՎԵՐԱՄՈՒՏ



Շոդիկ Ագափկեան

Ամառը ակնթարթի տեւողութիւն կ'ունենայ հոս: Հագիւ դպրոցները իրենց դռները փակած, կը սկսին շաբաթավերջի պտոյտները, «ամառնային ճամբար» դպրոցը, յետոյ վրայ կը հասնին տարեկան բաՆակումներն ու կրկին հասնելով Օգոստոսի վերջին շաբաթը՝ մարդիկ կը պատրաստուին դիմաւորել ուսումնական նոր տարեշրջանը:

Սակայն գարմանալին այն է, որ արձակուրդի երկրորդ շաբաթը չբոլորած, աշակերտին ծնողքը կը ստանայ ե-նամակ մը, որ կը տեղեկացնէ, թէ յառաջիկայ վերամուտի գրեական պիտոյքներուն ցանկը պատրաստ է եւ գնումներ կարելի է ընել, մանաւանդ որ շուկան ողորուած է դպրոցական պայուսակներով, մատիտներու եւ տետրակներու բազմապիսի գոյներով եւ չափերով:

Ակամայ դպրոցական քաղցր օրերս կը յիշեմ, երբ երկար ու հա-



ճելի ամառ մը անցընելէ ետք, անհամբեր կը սպասէիք վերամուտին, որ ընդհանրապէս Սեպտեմբեր ամսուան երկրորդ շաբաթը կ'ըլլար: Դպրոցին բակը խուռնեամբ բազմութիւն կը հաւաքուէր, աշակերտները գերխանդավառ տրամադրութեամբ կը շարունակէին իրենց տղայական չարածնիւթիւնները, մինչ առաջին դասարանցի փոքրիկները իրենց ծնողներուն ընկերակցութեամբ, կարկամած քայլերով մուտք կը գործէին «մեծերուն դպրոցը»:

Ստապատկերիս առջեւ կ'ուրուագծուի վերամուտը: Ահաւասիկ տնօրէնուհին կը յայտնուի եւ պաշտօնական ձեւով դպրոցին գանգը կը հնչեցնէ՝ բոլորը կարգի հրաւիրելով: Տեսնէք պատեն գամուած խոշոր գանգակին ձայնը ինչ մեծ ազդեցութիւն կը ձգէ աշակերտներուն վրայ: Կը տիրէ քար լռութիւն ու յըստակօրէն կը լսուի տնօրէնուհին ձայնը, որ հանգիստ, սակայն յարգանք պարտադրող կշռոյթով բարի գալուստ կը մաղթէ իր գաւակներուն: Ապա մէկիկ-մէկիկ կը հրաւիրէ ուսուցչուհիները, որոնք թուրջ մը բռնած կը յայտարարեն իւրաքանչիւր դասարանի անուանացանկը: Հոս, աշակերտները իրենց շունչը բռնած կը հետեւին. Աստուած մի արասցէ, եթէ երկու ընկերուհի իրարմէ բաժնուին, կայծակի արագութեամբ արցունքի գետեր կը հոսին ու երկար-բարակ ողջագուրումներէ ետք իւրաքանչիւրը իր դասարանին շարքը կ'ուղղուի:

Տնօրէնուհին անգամ մը եւս խօսք կ'առնէ, այս անգամ բացատրելով դպրոցին ընդհանուր կարգ ու կանոնը:

Աշակերտները խուժաբար դասարան կը բարձրանան: Հետաքրքրական պահ մըն ալ դասարան մտնելու արարողութիւնն է. տղաքը իրար հրմշտկելով կը փորձեն առաջինը մուտք գործել՝ դասարանին առաջին կարգի գրասեղանները գրաւելու համար. ինչ որ է, այդ մէկն ալ կարգի կը դրուի:

Դաստիարակը ներս կը մտնէ ու գրատախտակին վրայ կ'արձանագրէ գրեական պիտոյքներուն ցանկը, յետոյ կը բաժնէ դասագիրքերը եւ կը պատուիրէ թափանցիկ կողքով ծածկել գանոնը:

Դպրոցի առաջին օրը շուտով կ'աւարտի ու աշակերտները գոհ ու երջանիկ տուն կը վերադառնան: Երջանիկ, որովհետեւ նոյն օրն իսկ մեծերու պէս գնումի պիտի երթան:

Կեսօրէ ետք, տեսնէք գրատուներուն վիճակը, կարծեք մեղուափեթակներ ըլլան անոնք, խուժաբար մը ներս կը մտնէ, խուժաբար մը դուրս կ'ելլէ: Այդ իրարանցումն ալ հաճելի կը թուէր ինծի, որովհետեւ յաճախ ընկերուհիներուս կը հանդիպէի ու գոհունակ ժպիտով մը կրկին գիրար կը բարեւէիք:

Գնումներուն բաւական երկար ժամանակ տրամադրելէ ետք յաղթական տուն կը հասնէինք՝ «թուրջ»ին վրայ կշռուած բոլոր պահանջները լրացնելէ ետք:

Կը սկսէր անելի հետաքրքրական արարողութիւն մը. մօրս օգնութեամբ գիրքերը կը կողքէի ամենայն բժախնդրութեամբ: Կը ջանայի առանց հետք ձգելու կամ պղպաշակներ գոյացնելու սահուն կողքով պատել գիրքերս, ապա կ'անցնէի տետրակներուն: Անոնք ալ պետք էր գոց կապոյտ գոյնով ծածկէիք եւ յետոյ պիտակ մը փակցնէիք իւրաքանչիւրին վրայ ու գեղեցիկ գիրով մեր անուն-մականունը, դասարանը եւ դասանիւթը արձանագրէիք: Որքան բժախնդիր էի այս աշխատանքը կատարած պահուս:

Եւ այսպէս, աշխատանքը ավարտելէն ետք ես ու քոյրերս գիրքերն ու տետրակները հասակի կարգով կը տեղաւորէիք նոր ու գունաւոր պայուսակներուն մէջ եւ նախասենեակին մէկ անկիւնը դնելով գաւառնք՝ կ'ուղղուէիք ննջասենեակ քնանալու:

Հիմա նոյն այդ խանդավառութեամբ դպրոցական նախօրէին կատարուելիք գնումները կ'ընեմ աղջկաս հետ, որուն հոգեվիճակն ու ուղղած հարցումները կը յիշեցնեն իմ մանկութեան անկրկնելի օրերը:

Բարի վերամուտ, սիրելի՛ աշակերտներ ու ծնողներ:

2 Սեպտեմբեր 2019 Սոնթալ



## ԲԱՌԵՐՈՒ ԳԱՆՁԱՐԱՆԻՆ ՍԵՋ - 2

### «ԳԻՄ» ԵՒ «ՔԷ», ԳԱՄԱՌ ՈՒ ԲԱՂԱՔ, ԲԱՐՈՉ ՈՒ ԳԵՅԵՆ



Լևոն Գանյան

«Գիմ» տառին նկատմամբ մասնաւոր տկարութիւն մը ունիմ: Շեշտուած համակրանք մը կամ անբացատրելի գորով մը: Պարզապէս, որովհետեւ հայերէն այբուբենի այս երրորդ տառով կը սկսին **գիր, գիրք, գրադարան եւ գրականութիւն** բառերը, որոնք ահաւասիկ՝ անելի քան երեսունհինգ տարիէ ի վեր, ամօրեայ մտասուեռում, ընկեր եւ ուղեկիշ եղան ինծի:

Միւս կողմէ սակայն, կը խորհիմ որ «գիմ»-ի նկատմամբ իմ նախընտրութիւնը խաբուսիկ է, իրական չէ: Կրնա՞յ ըլլալ, որ ես խտրականութիւն ցուցաբերեմ այբուբենի տառերուն նկատմամբ ու գտնուեմ բաժնեմ երկու խումբի՝ «սիրելիներ» եւ «նուագ սիրելիներ»: Ո՛չ: Այդպիսի գատորոշում մը ճիշդ չեմ գտներ: Ընդհակառակն, ես կ'ուզեմ թեւաբաց գրկել 38 տառերը միասնաբար, կ'ուզեմ համահասարակ գուրգուրանք ցուցաբերել բոլորին հանդէպ. չեմ ուզեր որ անոնցմէ մէկը կամ միւսը անտեսուի, աչքէ հեռանայ, անարդարութեան գոհ երթայ...:

Հայերէնի 38 տառերն ալ, բոլորը, անհրաժեարելի բաղկացուցիչներն են մեր 1600-ամեայ գիր-գրականութեան:

Առնենք, գործիական, «գիմ»-ին երկուորեակ նկատուող «քե» տառը:

Ան բ ա գ ար ծ ա կ ա պ ե տ ե տ չի մնար «գիմ»-էն՝ իր կարելութեամբ, գործածութեան յաճախականութեամբ եւ եական դերակատարութեամբ: Բայական խոնարհումները անո՞վ կը գրենք (կը վագէք, կը վագենք, վագեցինք, վագեցիք, վագեցէք, մի՛ վագէք...), յոգնակիներու կազմութիւնը յաճախ անով կը կատարենք (տղաք, ծնողք, տիկնայք, տեարք, հալէպցիք, երեւանցիք...), նմանապէս՝ աչք, ոտք, ձեռք, որոնց յետադաս «ք»-ն յոգնակերտ մասնիկ է), բազմաթիւ ածանցներու կազմութիւնը անո՞ր վստահած ենք միշտ (պատմութեան, նայութեան, բարձրութեան, արցունք, իրաւութեան, ցուցմունք, սրտմաշութեան, քերուղտութեան, փսփսուք, միւռնոսրիներ, տնօրիններ, գարթօսք, կրօնք, խելօք, ընտանեօք, աղաչանք, գարմանք, տառապանք, դաշինք, քրտինք, գործիք, կարծիք, ընթրիք, հաճոյք, ինճոյք, Յակոբներք, Մարտիրոսներք, Վարդանանք, Ղեւոնդեանք...), ու տակաւին՝ անհամար բառերու սկիզբը, մէջն ու ետին՝ «ք»-ն ունի իր պատուաւոր տեղը:

Եթէ գիւղն ու գաւառը կը գրենք «գ»-ով, ապա քաղաքն ու քարայրն ալ կը գրուին «ք»-ով:

Մայիսասեան բառարանը ճիշդ 80 էջ յատկացուցած է «գիմ»-ով սկսող բառերուն: Անկախ մեծ թիւ մըն է: Առանձին՝ գրքոյկ մը կրնայ կազմել: Իսկ «քե»-ն գրաւած է 64 էջ:

Բառարանը յստակօրէն նշած է, որ «գ»-ն մեղմ բաղաձայն մըն է, իսկ «ք»-ն՝ թաւ է: Բայց հոս ալ սըրտցաւորէն ստիպուած ենք կրկնել, որ

մենք՝ արեւմտահայերս, դարերու հոլովոյթով կորսնցուցեր ենք այս երկու տառերը իրարմէ գատորոշող հնչիւնային նրբութիւնը (մեղմի ու թաւի կոկորդային արտաբերումի ճկունութիւնը) ու հետեւաբար՝ գտնուեմք վերածեր ենք ՆՈՅՆԱՅՆՉԻՆ գիրերու: Եւ հոսկէ ալ կը բխի սփիւռքահայ դպրոցական աշակերտին ուղղագրական անյարթահարելի դժուարութիւններուն մեծագոյն մասը:

Ուղղագրական դժուարութիւնները բառնալու համար՝ անհրաժեշտ է մօտիկէն շփուիլ բառերուն հետ: Չանոնք մօտէն ճանչնալ, կարծես թէ մեր մտերիմ ընկերները ըլլային անոնք:

\*\*\*

Վերնագրիս մէջ գործածեցի «գաւառ» բառը:

Բաւական գործածական ու լայն շրջանակներու համար հասկընալի բառ մըն է: Կ'ենթադրեմ սակայն, որ մեր երիտասարդներէն շատեր պիտի չգիտնան անոր իմաստը, վարանումի պիտի մատնուին: Գաւառ...: Այո՞:

Գաւառը երկրի մը սահմաններուն մէջ գտնուող վարչական փոքր հողատարածքն է, որ ընդհանրապէս կապուած կ'ըլլայ անտառային կամ նահանգի մը, կ'ունենայ նաեւ իր կեդրոնական քաղաքը: Չորօրինակ, Մեծ Հայքի (պատմական Հայաստան) 15 նահանգներէն իւրաքանչիւրը իր մէջ ուներ տասնեակ մը կամ անելի գաւառներ, որոնց ընդհանուր թիւը կ'անցնէր 175-ը: Տուրուբերանի գաւառներէն էին **Տարուն ու Հարքը**, Վասպուրականի գաւառներէն էին **Ոչտունիքն ու Արտազը**, Այրարատի գաւառներէն էին **Շիրակն ու Կոտայքը**, Շուքի գաւառներէն էին **Բալահովիտն ու Հաշտանքը**...: Հիանալի՝ անուններ՝ հիասքանչ աշխարհագրութեամբ:

Մեր լեզուն մշակողները «գաւառ» արմատէն շինած են բարդ կամ ածանցաւոր բազմաթիւ նորակերտ ու իմաստալից բառեր: Յիշենք. - **լեռնագաւառ, ծայրագաւառ, գաւառապետ, գաւառական, գաւառաբարբառ, գաւառակ, գաւառացի, բնագաւառ** եւ այլն:

Բայց միայն այսքան չէ: Այս «գաւառ» բառը մեր անջեւ կը բաւարարուի մտաստներու բաւական լայն հորիզոն մը:

Ամեն բանէ անաչք ես կ'ուզեմ յիշել մեր արեւմտահայ **Գաւառական գրականութիւնը**, որ կարճ շրջան մը, Մեծ Եղեռնէն անաչք, ի յայտ եկաւ Արեւմտահայաստանի հայաբնակ գաւառներուն մէջ ու այդ պատճառով ալ կոչուեցաւ այդպէս՝ «Գաւառական գրականութիւն»: Ատոր գըլխաւոր մշակները եղան Գարեգին եպս. Սրուանձտեանցը, Թլկատինցի, Մշոյ Գեղամը (Տէր Կարապետեան), Հրանդը (Մելքոն Կիրճեան), Ռուբէն Չարդարեանը, մասամբ՝

Յակոբ Օշականը: Այս մտաւորականները, ի տարբերութիւն պոլսաբնակ գրողներուն, իրենց գրողական ներշնչումը կ'առնէին բացառաբար գաւառէն, այսինքն՝ բո՛ւն իսկ Հայաստանի հողէն: Անոնք հայկական անարատ արիւն, գոյն ու համեմ կը ներարկէին մեր գրականութեան, սեւեռումի կ'ենթարկէին գաւառն ու գաւառացին, անոր հոգերն ու տագնապները:

Այդ հին օրերու հասկացողութեամբ՝ մայրաքաղաք Կ. Պոլսէն դուրս գտնուող ներքին բոլոր տա-



րածաշրջանները կը կոչուէին «գաւառ»: Մուշէն, Կարինէն, Կարբերդէն, Ատանայէն, Տրապիզոնէն, Մալաթիայէն կամ Կեսարիայէն Պոլիս եկող անձը, ի՞նչ հանգամանք կամ տարիք ալ ունենար, «գաւառացի» մըն էր՝ մայրաքաղաքի բնակիչներուն աչքին (յիշեցէ՛ք Արփիարեանի «Կարմիր ժամուց» վիպակին «գաւառացի տերտեր»ը): Եւ այս «գաւառացի» բառն ալ իր մէջ ուներ քամահրանքի թաքուն երանգ մը, որ հաւանաբար կը բխէր դասակարգային կամ քաղաքակրթական տարբերութիւններէ...: Կը թուի թէ շատ մը երկիրներու մէջ ի գօրու էր այս միեւնոյն ըմբռումը: Ֆրանսայի օրինակը պերճախօս է: Առ այսօր, մայրաքաղաք Փարիզէն դուրս՝ բոլոր քաղաքներն ու շրջանները «գաւառ» կը սեպուին: Ու եթէ հետախեր էք Փարիզի երբեմնի «Յառաք» օրաթերթին, պիտի յիշէք որ անոր ներքին թղթակցութիւններու լրատուական նշանաւոր սիւնակը կը կոչուէր «Չայնէր Գաւառէն», եւ որ կ'արձագանգէր Մարսելի, Լիոնի, Տէսիսի, Նիսի, Վալանսի, Կոնտանի ու արտափարիզեան հայաբնակ բոլոր շրջաններու ազգային-եկեղեցական կեանքի:

Բնաւ պետք չէ մտահան ընել, որ արեւմտահայ մեր կորուսեալ գաւառը մտաւորական մարդուժի անսպառ շտեմարան մըն էր ինքնին: Հոնկէ՛ կու գային մեր ամենէն արժեքաւոր ուսուցիչները, գրողներն ու հոգեւորականները: Խրիմեանն ու Սրուանձտեանցը կու գային Վանէն, Վարուժանը՝ Սեբաստիոյ Բրգնիկէն, Սիւմանթոն՝ Ակնէն, Մեծարեանը՝ Ակնայ Բինկեան գիւղէն, Մսնուրին՝ Երզնկայի Արմատանէն, Արտաշէս Յարութիւնեանը՝ Մալկարայէն, Յովի. Գագանճեանը՝ Եւրոկիայէն, Կոմիտասը՝ Կոտիկայէն, Ռուբէն Սեւակը՝ Սիլվիքիէն, Թորգոմ եպս.

Գուշակեանն ու Հ. Արսէն Ղազիկեանը՝ Պարտիզակէն, Կարօ Սասունին՝ Սասունէն, Գուրգէն Մխիթարեանն ու Արամ Հայկազը՝ Շապին Գարահիսարէն, ու տակաւին անելի նորերէն՝ Համաստեղը՝ Խարբերդի Փերչէնճ գիւղէն, Չարեհ Որբունիս՝ Օրտունէն, Շաւարշ Նարդունիս՝ Արմաշէն, Շուշանեանն ու Կարօ Մեհեանը՝ Ռոտոսթոյնէն, Բենիամին Թաշեանն ու Վարդան Կոմիկեանը՝ Ատափագարէն, Բիւզանդեղիայեանը՝ Ատանայէն, Կարօ Փօլատեանը՝ Մարաշէն, Մուշեղ Իշխանը՝ Սիվրիհիսարէն, Շառուկեանն ու ՎահեՎահեանը՝ Կիւրինէն...: Այս երգաւառը ահաւասիկ:

«Գաւառ» բառէն յառաջացած ասութիւն մըն է «**Գաւառական ժողով**»ը: Հայ Եկեղեցւոյ արեւմտահայ հատուածին համայնքային-թեմական կեանքին մէջ՝ այս անուով ծանօթ է երեսփոխանական ժողովը, որ թեմական կառոյցի մը օրէնսդիր լայնախարիսխ մարմինն է, բաղկացած՝ հոգեւորականներէ եւ աշխարհականներէ:

«Գաւառական ժողով»ը նուիրագործուեցաւ 1863-ի Ազգ. Սահմանադրութեամբ: Պոլսոյ Պատրիարքութեան նախաջրօր թեմերը հետզհետէ ունեցան իրենց տեղական ինքնավար «Գաւառական ժողով»ները, որոնք իրենց ներկայացուցիչներն ունէին պատրիարքարանի Ազգ. Ընդհանուր ժողովին մէջ: Այս վերջին ժողովին 140 անդամները կը կոչուէին «ազգային երեսփոխան»: Ասոնք երկու ետթերորդը (40 հոգի) գաւառէն պետք է գային: Ըստ Սահմանադրութեան՝ ընտրելի երեսփոխանները հարկ է որ ունենային «անձնական արժանիք»ներ, այսինքն՝ արքունի եւ պետական դիւանատուներու մէջ գրաւած ըլլային բարձր ու պատասխանատու պաշտօններ, ըլլային «**վկայեալ բժիշկներ, օգտակար գրքերու հեղինակներ, դպրատանց ուսուցիչներ, եւ ազգին օգտակար ծառայութիւններ մատուցած անձինք**» (տե՛ս «Ազգ. Սահմանադրութիւն», 10-րդ հոդ. 65): Միւշե՛տ այսօր ալ «Գաւառական ժողով»ներ ունին Լիբանանի, Բերիոյ, Եգիպտոսի թեմերը, Լաւե՛ք քանի մը այլ գաղութներ: Այս ժողովը ի՞նչ է որ կ'ընտրէ թեմի մը անաչքորդը, իրմէ կը բխին նաեւ նոյն թեմին Ազգ. Զարգացական ու Կրօնական ժողովները (Ազգ. Վարչութիւն), որոնք համարատու են իրեն: Եթէ կարդանք Ազգ. Սահմանադրութեան 99-րդ հոդ. 65-ը՝ կրնանք հիանալ ժողովրդավարայն սկզբունքներուն վրայ, որոնցմով անաչքորդիլ պարտաւորուէր են մեր ազգային մարմինները, մէկուկէս դար անաչք, օսմանեան լուծին տակ, պատրիարքէն սկսեալ մինչեւ յետին թաղականներ:

«Գաւառ»ը միաժամանակ քաղաք մըն է Հայաստանի Հանրապետութեան այժմու սահմաններէն ներս: **Գաւառ**: Մայրաքաղաք երեւանէն շուրջ հարիւր քմ. դէպի արեւելք, Սեւանայ լիճին շատ մօտիկ, 20-25 հազար բնակչութիւն ունեցող փոքրիկ քաղաք մըն է այս, Գեղամայ լեռնաշղթային լանջին: Մեր հանրապետութեան Գեղարքունիքի



Աշակերտական Անկիւն

ՃԵՊԸՆԹԱՑ ԽՕՍՔԵՐ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԻԹՈՎ

\*Այսօր՝ 2-9-2019: Շատ ծանօթ թուական մը բոլոր աշակերտներուն համար: Երէկ գիշեր շատ ուրախ էի: Վերամուտի պատրաստութիւններով զբաղ՝ անհամբեր կը սպասէի, որ առաւօտ ըլլայ եւ դպրոց մեկնիմ: Ուրախութեամբ եկայ դպրոց: Ես հպարտ եմ, որ դպրոցական եմ: (Մէյրի Ինճեճիկեան)

\*Վերամուտէն օրեր առաջ երբ նստած կը գծէի, եղբայրս կարողաց մեր դպրոցին յայտարարութիւնը վերամուտի մասին՝ 2 Սեպտեմբեր 2019-ին, վերամուտ է: Այդ օրը ահա հասաւ: Մինչ այդ մայրս յաճախ ինձի կը յիշեցներ, թէ շուտով վերամուտը կը հասնի: Ես կը պատրաստուէի այդ օրուան: Այսօր առտու եղբայրս գեղեցիկ երազս ընդհատեց. «Էւա՛, արթնցի՛ր, դըպրոց պիտի երթանք»:



Պատրաստուեցայ եւ դպրոցական փոխադրակառքով դպրոց հասայ: Հիմա անկեղծ կ'ըսեմ՝ շատ ուրախ չեմ: Երկար արձակուրդէ ետք դպրոց վերադառնալը իսկապէս դիւրին չէ, բայց ինչ կրնամ ընել: (Էւա Պետրոնիքեան)

\*Ամառնային ճոխ արձակուրդ մը անցնելէ ետք, 2 Սեպտեմբերին վերջապէս դպրոցի դռները կրկին բացուեցան՝ մեզ դիմաւորելու ուսումնական նոր տարեշրջանի մը համար: Մէկ խօսքով՝ վերամուտ:

Մէկ շաբաթ առաջ պատրաստուեցայ. Դասագիրքերս գնեցի, գրենական պիտոյքներս ապահովեցի եւ դպրոցական տարագոյն արդուկեցի:

Վերամուտի օրը առտու կանուխ, ուրախ արթնցայ, արագ պատրաստուեցայ եւ մեկնեցայ դպրոց՝ բարձր տրամադրութեամբ: Ընկերուհիներով գրուեցինք մեր արձակուրդին եւ վերամուտին մասին: Ժամը ութին հնչեց 2019-2020 տարեշրջանի առաջին զանգը: Տեղատարուեցանք մեր դասարաններէն ներս եւ աշխուժօրէն սկսանք հետեւիլ մեր ուսուցիչ- ուսուցչուհիներու բացատրութիւններուն:

Այսպիսով կը վերջանայ ամառնային արձակուրդը: Յաջող տարեշրջան կը մաղթեմ բոլորին: (Շողիկ Գաթապեան)

\*Առտու արթնցայ բարձր տրամադրութեամբ: Չե՞ որ այսօր դպրոցին առաջին օրն է: Նոր գրենական պիտոյքներս պատրաստած էի արդէն: Հագայ տարագոյն, նախաճաշեցի եւ ուրախութեամբ ուղղուեցայ դպրոց: Դասընկեր-դասընկերուհիներս աւելի հասունցած տեսայ, իսկ դպրոցը մեր նոյն սիրելի դպրոցն էր: (Լուսի Սաղտճեան)

\*Այս տարի ամառնային արձակուրդը շատ արագ անցաւ: Եւ արդէն... դասերը սկսան: Վերամուտի առտուն ուրախ արթնցայ, շատ արագ պատրաստուեցայ, վայրկեան առաջ կ'ուզէի դպրոց հասնիլ...: Դասերէն եւ դըպրոցէն աւելի կարօտցած էի դասընկերուհիներուս: (Բարտի ԼՆդեան)

\*Կանուխ արթնցայ՝ պատրաստուելու համար դպրոցի առաջին օրուան: Դժգոհ էի, բայց նոյն ատեն կարօտցած էի դպրոցին ու դասընկեր-դասընկերուհիներուս: Ահաւասիկ կը դիմաւորենք 2019-2020 տարեշրջանը: Բարի վերամուտ եւ յաջող տարի: (Լուսի Մալաթապեան)

\*Դպրոցին առաջին օրը զարթուցիչը հնչեց: Դժուարութեամբ արթնցայ: Շատ խանդավառ չէի դպրոցի վերամուտին առիթով, քանի որ դասերը պիտի սկսէին: Բայց հիմա, երբ դպրոցն եմ, շատ ուրախ եմ: Դպրոցական մթնոլորտին կարօտցած էի: (Մարիա Յովհաննէսեան)

\*Վերջացա՛ւ մեր ամառնային արձակուրդը: Դպրոցի առաջին օրն է: Մենք վերադարձանք մեր դպրոցին եւ ուսուցիչ- ուսուցչուհիներուն: Շատ ուրախ եմ, որ դպրոցը սկսաւ: Բոլորին՝ բարի վերամուտ: (Լարա Պետրոնեան)

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդան (Ը. Կարգ)

ԳԻՐՔԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԵՆ -2


ՎԱՅԱՆ ԹԷՔԷԱՆԻ «ՅՈՂԵՐ» ՀԱՏՈՐԸ



Լարա Արթին

Այս շաբաթ մեր ընթերցասեր ընտրանիին կը ներկայացնեմ գեղապաշտ սերունդէն պոլսեցի բանաստեղծին՝ Վահան Թէքէանի հատորը: Թէքէան Եւրոպա դէպքերէլէ շուրջ 7 տարի ետք կեանքի բերած է իր երախայրիքը, որ լոյս տեսած է 1901-ին, «Հոգեր» խորագիրով: Հատորը 36 չափածոյ եւ 31 արձակ քերթուածներու հաւաքածոյ մըն է:

Թէքէան հաւանաբար այս հատորը գրած է Կեօթի հետեւողութեամբ, որ կ'արտացոլայ «Տենչանքները» հնչեակին մէջ. «Տենչանքէն վայելում կ'անցնիմ եւ վայելումին մէջ տենչանքին կը փափաքիմ»: Իսկապէս ալ ան սիրոյ քաղցր տենչանքով չյագեցող, ամպամած շփոթութիւններուն յորձանքը ընտրող ու անցեալի յուշերուն սիրահարուած երգիչն է:



Հոգին երբեմն քանդուած սիրոյ բեկորներուն մէջ բանտարկելով երջանկութեան գերագոյն գգուանքը կը գգայ, նոյնիսկ եթէ իր դիցուհիին մօտ հողակոյտի մը մէջ թաղուի ու երկուքը ըլլան «իրարմէ քայլ մը հեռու»... («Ուրախութիւն»):

Քերթուածները խաչմերուկ կազմելով ընթերցողը կը ներշնչեն անցեալի պատրանքով տանջուող, անցած-փախած սիրոյ յուշերով ապրող, «Երագներու Ակումը» թերթատող ու վայելքի անորոշ բուրումներու օժանդակով վաղու երիտասարդ բանաստեղծին վառ գգացումներով:

Թէքէանի առաջին ընթերցումները ռոմանթիկ ուղղութեան հետեւող գրագետներու գործերէն են, ինչպէս՝ Պէշիկթաշեանի, Դուրեանի, Ալիշեանի, որոնք մեծ ազդեցութիւն գործած են իր վրայ: Ան մերժելով հանդերձ իրական կեանքը սեմպոլիստներու ազդեցութիւնը կրեց: Խորհրդանշաններով երեւոյթներուն թաքուն էութեան թափանցեց ու սուր մարդկային մտքին, հոգիին ու սրտին վրայ անոնց (երեւոյթներուն) թողած ազդեցութիւնը: Թէքէան գործօրինակ՝ մթութեան մէջ անեացումով ու իր կեանքին ողջութեան գաղափարը յայտնելով շեշ-

տը կը դնէ ցաւցնող այն իրականութեան վրայ, որ պիտի շարունակուի մինչեւ իր մահը: Բանաստեղծը իր այս տրամադրութիւնը սքանչելիօրէն կ'արտայայտէ «Խաւարին Սիրահար» արձակ քերթուածով ու կ'ըսէ. «Իմ ողջութեանս գիտակցութիւնը սակայն, մութին մէջ այնչափ որոշ էր՝ որ գոհացում մը կ'ըլլար ու անով թէթեւցած, յանկարծ, կը գգայի հիւլէի ծանրութեամբ իմ կեանքս փոխանակ քաշկռտուելու՝ կը թռչէր կը սահէր երկրի երեսը...»:

Միայն անկումային տրամադրութիւններով Թէքէանի «Հոգեր» հատորը արժեւորելը անպարկեշտութիւն է: «Խաւարին Սիրահար» Թէքէան հմուտ է լաւագոյն ձեւով արտայայտելու հոգեկան պահերու ելեւէջները, դիւթական տեսիլներու աշխարհէն՝ խիւղի եւ գեղեցկութեան պատկերներով. «Իմ սերս ջիւջ առուակ մըն է, որ յուշիկ կը հոսի խոտերուն տակէն, ընդարձակ դաշտին մէջ...» («Խալստ Սեր»):

Հատորը լեցուն է սիրոյ առթած բաղձանքի ու կեանքի ողորուն երգերով: Անոնց կ'ընկերանան անհուր աչքեր, «Չորցած Աղբիւր» մը, թռչած «Նարկիս» մը ու բարկութեամբ նետուած ճերմակ «Երիցուկներ»: Այս բոլորը թերթատելով կը նկատենք բանաստեղծին հոգեկան վերիվայրումները, իր կեանքի վերջալոյսին մօտալուտ բօթը, մութին ցայտուն գրանցութիւնը, որ իր մթնոլորտով կը կազմէ «Հոգեր»ուն ամբողջութիւնը:

Իր սիրային բանաստեղծութիւններուն դրդապատճառն ու մեկնակետը յաճախ եղած է անուն մը, ծաղիկի գոյն կամ բոյր մը, նայուածք մը, շարժում մը:

Բանաստեղծը խորանալով իր հոգիին դարբնոցին մէջ, հոնկէ դուրս բերած է մտքի կնիքով օժտուած հնչեակներ, ինչպէս՝ «Կարաւանը», «Պատրաստութիւն», «Վերոյիշում», «Անձրէ», «Ինքզինքս»: Անոնցմէ իւրաքանչիւրը իր պատկերներով ու երբեմն խորհրդանշաններու շքեղութեամբ կը տպաւորեն ընթերցողը:

Պղատոնական սիրոյ գոհունակութիւնը յաճախ կը մեղմացնէ բանաստեղծին ճախրանքը ու այդ վիճակէն ելլելով աւելի կ'ամփոփուի ինքն իր մէջ, բայց յետադարձ ակնարկ մը կատարելով կը գոջայ իր չապրած օրերուն համար: Այս իմաստով կատարեալ ստեղծագործութիւն մըն է «Սիրոյ Կղզին» քերթուածը: Բանաստեղծը երագով կը բանայ սիրոյ դուռը, լուսաթաթախ հոգիով ամայութեան մէջ ինքնամփոփ՝ կը շարունակէ անանձնական ուրախութիւնը երգել այլոց դիտելով, բայց վերոյիշելով սիրած Եակը կը սկսի կանչել զինք.

«Սիրոյ կղզիէն ես նամակներ ու տաղեր դրկեցի  
Հեռաւոր իմ ընկերիս, բայց կղզիին ափունքին հասած»



Հին Յունաստանի մեջ Sophocle անունով իմաստասեր մը գրած է «Antigone» խորագիրով թատերգութիւնը: Անթիկոն հերոսուհի մըն է, որ դէմ էլած է իր հօրեղբօրը՝ Զրեոնին, երբ եղբայրը Զրեոնի դէմ պատերազմի ընթացքին նահատակուած է:

Զրեոն օրէնք մը կը հաստատէ, ըստ որուն՝ «ան որ իրեն դէմ է եւ դաւաճան է, պիտի չթաղուի» եւ կը հրահանգէ, որ անոնց դիակները անասուններուն կեր դարձնեն: Անթիկոն դէմ կ'ելլէ այս գաղափարին ըսելով. «Այն մարմինը որ մայրս ծնունդ տուած է, չեմ կրնար անասուններուն կեր դարձնել»: Ան իր եղբայրը կը թաղէ: Այսպիսով Անթիկոն դէմ կ'ելլէ թագաւորին օրէնքին: Զրեոն Անթիկոնը կը յանդիմանէ ըսելով. «Ինչ իրաւունքով դէմ կ'ելլես օրէնքներուս»: Անթիկոն կը պատասխանէ. «Շատ լաւ գիտեմ օրէնքը, բայց ո՛չ դուն, ոչ ալ ուրիշը կրնայ աստուածներու օրէնքներուն դէմ դնել»: Զրեոն սաստիկ կը գայրանայ այս պատասխանէն եւ սպանել կու տայ Անթիկոնը:

Սոյն պատմութիւնը շատ լաւ օրինակ մը կրնայ հանդիսանալ՝ խօսելու արդարութեան, իրաւունքի եւ ուժի մասին:

Արդարութիւնը օրէնքներու բացարձակ յարգանքն է: Այսինքն արդար է այն անձը, որ օրէնքները կը յարգէ: Այլ խօսքով, երբ մարդ արարածը պետութեան կամ այլ հաստատութիւններու կողմէ իրեն համար սահմանուած օրէնքները կը յարգէ եւ կը գործադրէ գանձը, կը տիրանայ իր իրաւունքին ու արդարութեան:

Սակայն, այստեղ հարց մը կը ծագի, որ մարդկային կեանքի շրջանակէն ներս միշտ գոյութիւն ունեցած է, ունի եւ պիտի ունենայ տեւաբար: Եթէ օրէնքները արդար չեն, ինչպէ՞ս կարելի է բնորոշել արդարութիւնը:

«Արդար է այն մարդը, որուն ուժը տիրական է»: Այս խօսքը կը պարզէ, թէ իրաւունքը եւ արդարութիւնը հիմնուած են ուժի վրայ: Շատ պարզ օրինակներ կարելի է տալ մեր կեանքէն: Երբ նախարարի մը գաւազնը սխալ արարք մը գործէ իր նմանին հանդէպ, - գործընկերակիցն ան կ'արկածի մը պատճառ դառնայ, - շատ դիւրութեամբ անմեղ կը յայտարարուի, որովհետեւ ան է տիրականը, ան է զօրաւորը, իսկ իր նմանը, որ անմեղ է՝ անարդարօրէն կը պատժուի: Համոզի՞չ է ուրեմն այն երգը, որ կ'ըսէ. «Իրաւունքը ուժն է միայն»: Եթէ զօրաւոր ես, կը նշանակէ դուն ես իրաւացին եւ արդարը, իսկ եթէ տկար ես, կը նշանակէ ծառայ ես: Այս գաղափարը կ'արտացոլայ Անթիկոնի եւ Զրեոնի պատմութեան մէջ:

Մեծագոյն իմաստասերներէն Ժան Տը Լա Ֆոնթենը հետեւեալը կ'ըսէ. «Չօրաւորին պատճառաւորութիւնը միշտ լաւագոյնն է»: Այս խօսքը շատ մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ մարդկային կեանքին մէջ: Պետութիւններէ ներս մարդիկ կ'աշխատին տիւ ու գիշեր իրենց հայրենիքին եւ ընտանիքին համար, սակայն միւս կողմէն, պետութիւնը իր ժողովուրդին մարդկային կա-

## ԿԱՐԵԼԻ՝ Է ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԻՄՆԵԼ ՈՒԺԻ ՎՐԱՅ



Սարգիս Սարգիսեան

րիքները չի յոգար: Ժողովուրդին պարանոցն ալ պետութեան ձեռքը ըլլալով, ան միշտ ենթակայ կը մնայ պետութեան, որու ժողովը կառավարէ երկիրը: Այս իրողութեան լաւագոյն օրինակը հայ ժողովուրդին դէմ գործուած ցեղասպանութիւնն է: Հայ ժողովուրդը ստորուկ էր թրքական տիրապետութեան տակ, չունէր ազատութիւն, արդարութիւն եւ իրաւունք: Ենթակայ էր թրքական պետութեան անարդարութեան ու բռնատիրութեան: Տեղասպանութենէ ետք, հայ ժողովուրդի արդարութեան մարտիկները վրէժխնդրական արարքներով պատժեցին օսմանեան դահիճները՝ «ակն ընդ ական, ատամ ընդ ատաման» օրէնքը հաստատելով:

Իրաւունքը եւ արդարութիւնը միշտ զօրաւորին կողմն են: Այս գաղափարը 2500 տարի առաջ երկու սուփեստներ՝ Կործիսա եւ Զալիլիսէս, կը հաստատեն:

Մաքիավելլի իր «Իշխանը» գիրքին մէջ կը հաստատէ, թէ իշխանը ամէն ձեւով պէտք է իշխան մնայ, իշխանը իրաւունք ունի ոտնակոխելու ամէն տեսակ արարածներ, որպէսզի իշխան մնայ: Մաքիավելլի դիտել կու տայ, թէ ամէն ջանք պէտք է թափել հասնելու մեր նպատակին: Թէ ի՞նչ կը պատահի ուրիշին, կարելի չէ, կարելի չէ մեր նպատակին:

Արդարութիւնը մարդոցմէ շատ անելի բարձր բան մըն է, այլ խօսքով արդարութիւնը Աստուածային է եւ ոչ մէկ մահկանացու կրնայ այդ արդարութիւնը խնդրոյ առարկայ դարձնել:

Աստուած միշտ արդար եղած է, եւ միշտ ալ այդպէս կը մնայ իր որդիներուն հանդէպ, որովհետեւ Արարիչը արդար էր նախքան մարդը ստեղծելը: Եթէ արդար չըլլար, չէր ստեղծեր: Աստուած արդար էր նախքան ստեղծագործութիւնը, Աստուած արդար էր ստեղծագործութեան ընթացքին եւ ստեղծագործութենէն ետք: Աստուած արդար էր ստեղծագործութենէն ետք, որովհետեւ Ադամին եւ Եւային արդարօրէն պատժեց, երբ անոնք իր սահմանած օրէնքը չգործադրեցին: Աստուած պատիժէն ետք ալ արդար էր, որովհետեւ Ադամին եւ Եւային իրենց մեղքերը քաւելու ձեւը բացատրեց:

Աստուած այնքան արդար էր, որ Սողոմոն եւ Գոմորի կործանումէն առաջ, արդար անհատ մը փնտռեց, որպէսզի փրկէ տեղւոյն ժողովուրդը, սակայն արդար անհատ մը չգտնելով ամբողջ քաղաքը կործանումի ենթարկեց:

Աստուածաբանութեան մէջ կը հանդիպինք յունարէնէով Theodicee՝ Աստուծոյ արդարութիւն գաղափարին:

Theodicee-ը կը մերժէ աշխարհի մէջ ամէն գէշ բան Աստուծոյ վերագրելը: Երբ մարդ, գործընկերակից

երեք գաւազն ունի, երկուքը առողջ եւ լաւ վիճակի մէջ են, սակայն երրորդը տկար է, այդ մէկը Աստուծոյ կը վերագրուի, որովհետեւ Ան է Արարիչն ու Ստեղծիչը: Մարդիկ չեն մտածեր, թէ առողջական հարցեր կրնան ունենալ:

Ինչպէս որ Աստուած մարդը դատեց իր հաստատած օրէնքներուն համաձայն, այնպէս ալ մեր երկրաւոր կեանքին մէջ մարդը պէտք է դատուի իր դեկավարներուն կողմէ սահմանուած օրէնքներով:

Արդարութիւնը կը թարգմանուի եւ կը մարմնաւորուի օրէնքներով: Ան կը հիմնուի իրաւունքներու վրայ:

Արդարութիւնը կը մերժէ համայնական արդարութեան գաղափարը, որովհետեւ մարդիկ հաւասար չեն:

Արդարութիւնը արժեքներու վրայ չի հիմնուիր, որովհետեւ նման պարագայի ան կախեալ կ'ըլլայ արժեւորող անձէն:

Արդարութիւնը կը հիմնուի օրէնքներու վրայ, հետեւաբար արդարութեան ողորմութեան գաղափարով մօտենալը սխալ է, որովհետեւ ողորմութիւնը եւ արդարութիւնը տարբեր հասկացութիւններ են: Արդարութիւնը առարկայական է, որովհետեւ օրէնքներու վրայ հիմնուած է, մինչդեռ ողորմութիւնը ենթակայական է: Այլ խօսքով՝ ես իմ ազատ որոշումով եւ կամքով է որ կ'որոշեմ, թէ ողորմութիւն պիտի ընեմ թէ ոչ: Չկայ օրէնք, որ կը պարտադրէ ողորմութիւն ընել: Արդարութիւնը հիմնուած է իրաւունքի վրայ, մինչդեռ ողորմութիւնը հիմ-

նուած է սիրոյ եւ բարութեան վրայ: Արդարութիւնը կրնայ տիեզերական ըլլալ, սակայն ողորմութիւնը յարաբերական է:

Ուրեմն արդարութիւնն ալ յարաբերական է: Ինչպէ՞ս կարելի է արդարութիւնը բացարձակ համարել, երբ պետութիւններու կողմէ մշակուած օրէնքները տարբեր են:

Արդարութիւնը բացարձակ չի կրնար ըլլալ, որովհետեւ օրէնքները կը փոխուին՝ ըստ տեղին, ժամանակին, վիճակին եւ մտայնութեան:



Ինչ որ արդար կը համարուի այսօր, վաղը կրնայ անարդար համարուիլ, որովհետեւ մտայնութիւնները կը փոխուին: Երկիրներ կան, որոնց օրէնսդրութեան մէջ մահապատիժը արտօնուած է, իսկ այլ երկիրներու՝ ոչ:

Եզրակացնելով ըսեմք, որ արդարութիւնը երբեք պէտք չէ հիմնել ուժի վրայ: Անելի լաւ է ուժ տալ արդարութեան, քան թէ իրաւունք՝ ուժին, ու փորձել այնպէս մը ընել, որ արդարութիւնը կիրարկուի: Փասքալ կ'ըսէ. «Արդարութիւնը առանց ուժի երազանք է, իսկ ուժը առանց արդարութեան՝ բռնատիրութիւն»: Ուժը պէտք է գործածել միայն արդարութիւն կերտելու եւ մեր իրաւունքները հաստատելու համար, ոչ թէ մեր «արդարութիւնը» հաստատելու եւ ուրիշները զրպարտելու համար: Երբ արդարութիւնը տեւաբար ուժի վրայ հիմնուի եւ գործադրուի «ակն ընդ ական, ատամ ընդ ատաման» գաղափարը, Մահաթ Մա Կանտիի ըսածը կ'ըլլայ՝ «աշխարհի վրայ երկու աչք եւ երկու ականջ ունեցող մարդ չի մնար»:

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

**Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Կրթական Խորհուրդը 2019-2020 դպրոցական տարեշրջանի համար կարիքը ունի՝**

1. Տնօրէնի
2. Տեսուչի
3. Հաշուապահի
4. Զարտուղարի
5. Ծառայողի (տնտես հայրիկ- տնտես մայրիկ)
6. Հայերէն, Արաբերէն, Անգլերէն եւ այլ մասնագիտութեան ուսուցիչ-ուսուցչուհիներու:

**Թեկնածուները պարտին ունենալ.**

- Համալսարանական վկայական վաւերացուած սուրիական պետութեան կողմէ:
- Կրթական ձեռնհասութեան վկայագիր կամ երկու եւ անելի տարիներու որեւէ Վարժարանի մէջ դասաւանդման փորձառութիւնը հաստատող վկայագիր:
- Մանկավարժական փորձառութիւն:
- Վարչական աշխատանքներու գիտութիւն, փորձ եւ հմտութիւն:

**Փափաքողները կրնան դիմել Հայ Աւետարանական Կրթական Խորհուրդի գործադարութեան գրասենեակ:**

*Սուրիոյ Հայ Աւետ. Համայնքի Կրթական Խորհուրդը  
Հեռաձայն՝ 4642450 - 0991 466 602*



## Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Ն Բ



### ԽԱՉԲԱՌ (ՄՆ 311)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

- Հորիզոնական**
- Մենակեաց: Հանդիսաւոր խոստում:
  - Վայրի կենդանի թակարդելու ցանց: Արական անուն:
  - Հակառակ՝ տարի: Ամենէն առաջ: Հակառակ՝ անձնական դերանուն:
  - Կրկին: Յերեկ: Հակառակ՝ հայերէն գիրերու գիւտին թուականը:
  - Ծոյլ, թոյլ: Գող:
  - Իգական անուն: Չտող գործիք:
  - Անընդունակ: Փոխանցել:
  - Խոշոր մուկ:
  - Նայուածք: Հակառակ՝ ժամանում: Եւս:
  - Կօշիկ նորոգող: 420:
  - Հակառակ՝ առարկայ: Մէկը:
  - Ուղիղ գիծ, որ շրջանակի կեդրոնէն անցնելով երկու հաւասար մասերու կը բաժնէ:

- Ուղղահայեաց**
- Զբօսնուլ: Հայ դիցաբանութեան մէջ մայրութեան եւ պտղաբերութեան աստուածուհին:
  - Գրախանութ: Հակառակ՝ 460:
  - Հակառակ՝ անձնական դերանուն: Հակառակ՝ թաքուն պայթուցիկ:
  - Պոչ: Վայրի աղանի:
  - 7001: Ձայնանիշ: Հակառակ՝ վերջածանց:
  - Փշապատ չորքոտանի: Փոքրացնող մասնիկ: Հակառակ՝ գոգ:
  - Գիւղաքաղաք:
  - Ցաւի ճիչ: Վերջին կայծը արձակող:
  - Յարաբերական դերանուն: Այլ ձեւով: Աղետի արձակած սլաք:
  - 7200: Ընտրէ՛: Զէն:
  - Գուրգուրանք:
  - Անպատասպար: Լեցուն:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Համազգայինի «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղի 35-րդ անդամական ընդհանուր ժողովի Ա. նիստը պիտի գումարուի Կիրակի, 15 Սեպտեմբեր 2019-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, ԱՄԺ Տան «Լեւոն Շաւոյ» սրահէն ներս:

Կը խնդրուի մասնաճիւղի բոլոր անդամներուն ներկայութիւնը:

**Համազգայինի «Նիկոլ Աղբալեան»  
Մասնաճիւղի Վարչութիւն**

### Պատրաստեց Մարինա Զիւլքոչեան-Պողիկեան

### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 310)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

		8		2	5		9	
			4	9		1		6
				6		7		
	8	2	7		4	9		3
		1	2	3				8
2				5	3			4
					1			
	9		6	7		3	1	

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 81)

Սիւսմանթոյի բանաստեղծութիւնները շնչելով գտէ՛ք պահուած բառը: Պահուած բառը 8 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Սիւսմանթոյի բանաստեղծութիւններէն մէկը:

չ	ս	տ	ն	ւ	ն	ը	խ	փ	ա
ա	է	ն	մ	ը	ք	յ	հ	ա	ն
ք	մ	փ	ւ	թ	ղ	ն	ա	ռ	դ
չ	ա	ա	օ	բ	բ	յ	յ	ք	բ
ա	է	ղ	հ	ի	բ	ս	բ	ը	ա
ք	ա	ք	խ	ն	հ	ի	է	հ	ն
ա	դ	ն	ա	ն	ւ	ն	ն	ա	ի
ն	մ	ա	գ	գ	մ	ա	ի	մ	կ
ք	գ	ի	ւ	տ	ի	ն	ն	ա	ա
ի	ս	տ	է	ս	ի	լ	ք	բ	հ

«Անդրանիկ», «Ափ Մը Մոխիր, Հայրենի Տուն», «Չարչարանքի Երագ», «Գիւտին Փառքը», «Մահուան Տեսիլք», «Յոյսին Համար», «Սուրբին Աղօթքը», «Հոգիս»

## ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

### ԽԱՉԲԱՌ (ՄՆ 310)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	ք	ն	ն	է	կ	ա	լ	պ	ի	ն	դ	
2	ա	ք	ա			յ	ի	ա		ա	ք	
3	ն	ա	ք	դ	ն	ս		ք	ա	կ	ա	
4	դ	ս	է	դ		ս	ք	ն	ւ	ա	կ	
5	ն	խ		է	ք	կ		ն	ւ	ք	ա	
6	ւ		լ	ա		ա	ն	ք		ն		
7	ա	2		կ	տ	ա	կ	է	ք		ն	
8	ծ	ա			ի	լ		խ	լ	ի	ժ	
9	օ	ք	ք	ա	ն		մ	ի	ժ	ա	մ	
10	ճ	ա	ք	ճ	ա	տ	ի	ւ	ն		տ	
11	ա			ք	ք		ս	ի	տ	ն	ի	
12	խ	ճ	ա	ն	կ	ա	ք		ս	ա	յ	լ

### ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 309)

9	3	4	1	7	2	8	6	5
5	2	7	6	8	4	1	9	3
6	1	8	3	5	9	2	7	4
2	6	3	5	9	7	4	8	1
8	7	9	4	1	3	5	2	6
1	4	5	8	2	6	7	3	9
3	9	2	7	4	1	6	5	8
7	8	1	9	6	5	3	4	2
4	5	6	2	3	8	9	1	7

### ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 80)

Պահուած բառը՝ «Պարապութիւն»



## ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



### ԽՈՅ

Առողջական անցողիկ խնդիր մը պիտի ունենաք: Աշխատեցէք ունենալ գոհունակ սիրտ եւ խաղաղ հոգի:



### ՅՈՒԼ

Ձեր միտքերը պիտի տարտղուտին այս շրջանին, եւ դուք ճշուած պիտի գգաք որոշ ժամանակ: Համբերող եղէք:



### ԵՐԿՈՒՐԵԱԿ

Պիտի փափաքիք ճամբորդութիւն կատարել եւ նոր երկիր տեղափոխուիլ: Ձեր դիրքը ամրապնդելու համար ընկերութեան մէջ յաւելեալ ճիգ եւ ջանք պետք է թափէք:



### ԽԵՑԳԵՏԻՆ

Պայմանները պիտի ստիպեն ձեզ, որ ըլլաք ճկուն եւ դիւանագետ՝ ձեր յարաբերութիւններուն մէջ: Չիջումներ պետք է կատարէք, եթէ կ'ուզէք ձեր դատը շահիլ:



### ԱՌԻԾ

Հեռու մնացէք ձեր թշնամիներէն եւ հակառակորդներէն: Ամբարտաւան մարդիկ կրնան ձեր օրը փճացնել, նախընտրելի է գործ չունենալ անոնց հետ:



### ԿՈՅ

Ծանր պատասխանատուութեան դիմաց պիտի գտնուիք: Դժուար ու յոգնեցուցիչ շրջան մըն է: Համբերեցէք եւ ձեր բոլոր հարցերը պիտի լուծուին:



### ԿԵՒՈՔ

Հանգիստ եւ ուրախ պահեր պիտի ապրիք ձեր հարազատներուն ներկայութեան: Համարձակօրէն ձեր գաղափարները եւ միտքերը արտայայտեցէք:



### ԿԱՐԻՃ

Տեսաբար բացասական դիտանկիւնէ մի նայիք հարցին, որպէսզի բախում չունենաք ուրիշներուն հետ:



### ԱՂԵՂՆԱՒՈՐ

Յարմար շրջան է՝ քննարկումներու եւ գրոյցներու մասնակցելու եւ ձեր տեսակետը համարձակութեամբ արտայայտելու համար:



### ԱՅԾԵՂՋԻՐ

Առեւտրական գործարքի մը պիտի մասնակցիք եւ շահ պիտի ապահովէք: Խոհեմ եղէք ձեր ընկերային յարաբերութիւններուն մէջ:



### ՋՐՅՈՍ

Ձեր ամբողջ ճիգը կեդրոնացուցէք ձեր աշխատանքին վրայ, որպէսզի յաջողութիւն արձանագրէք եւ պաշտօնի բարձրացում ունենաք:



### ՁՈՒԿ

Հանգիստ եւ ապահով պիտի գգաք ձեր ընտանիքի անդամներուն կողքին: Ձեր բոլոր ծրագրերը պիտի չյաջողին: Կտրուկ որոշումներ մի՛ տաք այս շրջանին, որպէսզի յուսախաբ չըլլաք:

# ԽՆՃԱՆԿԱՐ



Շաղիկ Գաբրիէլեան



## D ԿԵՆՍԱՆԻԻԹԸ

Յաճախ երբ D կենսասնիւթի անուան հանդիպինք, կը խորհիք արեւուն եւ Calcium-ին (կրածինին) հետ անոր կապակցութեան մասին: Այո՛, D կենսասնիւթը սերտօրէն աղերսուած է կրածինին եւ արեւուն հետ, բայց նոյնքան կապ ունի մարմնի աճին, դիմադրողականութեան, ծանրութեան եւ առողջութեան հետ:

### 1.- D կենսասնիւթը եւ կրածինը

D կենսասնիւթը կը պատկանի այն խումբին, որ կը լուծուի ճարպերուն մէջ: Այս պատճառով D կենսասնիւթով հարուստ ուտեստները կը պարունակեն ճարպեր:

Մեր մարմնին Cholesterol-ը (մաղձաճարպը) մեծ դեր ունի D կենսասնիւթի կառուցման մէջ, անշուշտ արեւուն ներկայութեան: D կենսասնիւթը կ'օգնէ նաեւ կրածինի ներծծման: Այս պատճառով ալ ան շատ կարեւոր է ոսկորներուն համար:

D կենսասնիւթի ներծծումը կը նուազի այն անձերուն մօտ, որոնք ունին մարսողութեան, լիարդի կամ երիկամներու հարցեր:

50-էն վար տարիքին մեր մարմինը օրական պէտք ունի 600 IU. D կենսասնիւթի: Մարմնին կարիքը կը բարձրանայ 50-էն ետք եւ կը հասնի 700 IU-ի:

Օրական 15 վայրկեան արեւուն ենթարկուիլը բաւարար է ստանալու համար D կենսասնիւթի մեր օրական պահանջը, անշուշտ ճշգրիտ սննդականոնի հետեւելով մեկտեղ: Փոքրիկներուն կարիքը կը տարբերի մարմնի մարմին: Անոնց D կենսասնիւթ պէտք է տրուի բժիշկի հսկողութեան տակ, բայց պէտք է ուշադիր ըլլալ, որ փոքրիկը 3 տարեկանէն ետք, օրական խմել անուազն 2 գաւաթ կաթ, որպէսզի ստանայ իր օրական անհրաժեշտ կրածինը: Նախընտրելի է օգտագործել D կենսասնիւթով հարուստ կաթի տեսակներ:



Երբ մեր մարմինը կ'ունենայ D կենսասնիւթի կարիք, ինքնաբերաբար կ'ունենայ նաեւ կրածինի կարիք:

### 2.- D կենսասնիւթը եւ ծանրութիւնը

Ըստ ուսումնասիրութիւններու, երբ մենք կը ստանանք մեր օրական անհրաժեշտ կրածինը եւ D կենսասնիւթը, կը կարգաւորուի մեր ախորժակը եւ սա կ'օգնէ, որ մեր մարմինը աւելի արագ այրէ ճարպերը: Այս պատճառով բոլոր անոնք, որոնք կ'ուզեն իրենց ծանրութիւնը նուազեցնել եւ չզիրնալ, նախընտրելի է, որ սննդականոնի հետեւելէ առաջ վստահ ըլլան, թէ կը ստանան իրենց օրական կրածինի պահանջը եւ արեւան քննութեամբ ստուգեն D կենսասնիւթին քանակը:

Մեր օրական կրածինի կարիքը 1000 մկ. է, որ մօտաւորապէս 3 գաւաթ կաթի կամ մածուկի համազօր է:

### - Ինչպէ՞ս իմանալ, որ մեր մարմինը D կենսասնիւթի նուազումէն կը տառապի

Ընդհանրապէս D կենսասնիւթի նուազ ըլլալուն հետեւանքով կը յառաջանան յոգնածութիւն, մկաններու եւ յօդերու ցաւ, բայց ճշգրիտ արդիւնք ստանալու համար անհրաժեշտ է արեւան քննութիւն կատարել:



### -Ո՛ր կը գտնուի D կենսասնիւթը եւ որքա՞ն է մեր օրական կարիքը

D կենսասնիւթով հարուստ ուտելիքները քիչ են: Ան կը գտնուի առաւելաբար ձկնեղէնին մէջ: D կենսասնիւթով հարուստ է յատկապէս Salmon-ը, ետքը Ton-ը եւ sardine-ը, որոնցմէ ետք կու գայ հակիթը եւ D կենսասնիւթով զօրացուած կաթն ու պանիրը: Գոյութիւն ունին D կենսասնիւթի գանազան դեղահատեր, զորս կրնանք օգտագործել բժիշկի հսկողութեան տակ, որովհետեւ D կենսասնիւթին քանակը բարձր ըլլալու պարագային կ'աւելնայ կրածինի ներծծումը եւ այս մէկը յառաջ կը բերէ կրածինի կուտակում մեր մարմնի միւս օրկաններուն մէջ ու աստիճանաբար կը փճացնէ գանոնք:



## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### «ԳԻՄ» ԵՒ...

Սկիզբ՝ էջ 9

մարզին կեդրոնն է: Զանի մը անուանափոխումներ ունեցեր է. նախապես կոչուեր է Նոր Պայազիտ, յետոյ՝ Կամո (համայնավար հայ գործիչի մը անունով): Հոս ծնած են խորհրդահայ քանի մը նշանավոր դեմքեր, ինչպես՝ դերասան Ֆրունզե Տովլադեանը, բանաստեղծ Պահարեն, գրականագետ Վաչե Նալբանդեանը եւ այլն:

(Շարունակությունը՝ յաջորդիս)

### ՄԺԵՂՆԵՐՆ...

Սկիզբ՝ էջ 7

կուն, բարձր ունակություններ կը պահանջէ, իսկ աղբակոյտերուն ջուկէն ուստոստելն ու տհաճ մարդոցմէ խուսափելը՝ աննկուն կամք:

Կը հասնիմ «սերվիս»ներու կեդրոն:

Ի՞նչ է «սերվիս»ը: Ան դեղին ինքնաշարժ մըն է, որուն առջեւի բաժինը երկու յաճախորդ կը թըխմուի, իսկ ետեւի բաժինը՝ երեք: Հոն կը սկսի ճգնաժամը: Դուն որպէս յաճախորդ պետք է այնքան խոհեմ ու սրամիտ ըլլաս, որ Աստուածային շնորհքով մը գիտնաս, թէ կարգը ո՞ր ինքնաշարժին է եւ այնտեղ բարձրանաս, թէ ոչ ինքզինքդ ծախու ապրանք մը գալով վարորդներու «կուռայաճախորդ» կը դառնաս, եւ սկիզբ կ'առնէ տարբեր տեսակի հերոսամարտ մը, որուն ընթացքին լսուած հայիոյանքներէն ափի բերան կը մնաս:

Կը հասնիմ գործավայրս՝ Հալեայի Պետական Համալսարան: Առաւօտեան մաքուր օդը, գեղեցիկ տեսարանը եւ ծառն ու ծառաստանը տիրականներկայութիւնն են: Աղբահալաքը ամէն տեղ մաքրած ու գետինը աւլած է, սակայն կէսօրին՝ վերադարձիս նոյն ցաւալի երեւոյթը՝ գետին թափած խաւաքարտէ գաւաթներ, ուտելիքներու թուղթեր, թաշկինակներ եւ տետրակներէ փրցուած էջեր: Տակաւին քաղաքիս բարձր մակարդակի ուսում ստացող խաւին մասին կը խօսիմք: Բացառությունները միշտ գոյութիւն ունին եւ յարգելի են, սակայն մենք կը ջանանք տհաճ երեւոյթները մատնանշել:

Երկարեցի չէ՞, աս ալ պատմեմ եւ յօդուածս աւարտեմ:

Անցեալ օր, իրիկունը նստած էինք: Յանկարծ փա՛թ-փա՛թ-փա՛թ ձայներ կը լսենք: Երբ պատերազմի հրթիռներու եւ հրասանդերու ձայները տակաւին երեւակայութենէդ չեն վերացած, պահ մը կը շփոթիս եւ կ'ուզես լսուած ձայնին բնոյթը ճշդել. չմտահոգուի՞ք... Նոր Գիւղը ապահով է. այդ ո՛չ հրասանդի ձայն էր, ոչ ալ ձեռնառումբի, այլ պարզապէս՝ պատշգամներէ շարուած աղբի տոպրակներու: Սակայն արտասովոր այդ չէր, այլ դրացիին պոռչտուքն էր, որ բարձրացաւ յանդիմանելու իր այն դրացին, որուն

աղբ շարտելը նշմարած էր մութին մէջ: Անհաւատալի, բայց իրաւ: Ահաւասիկ քաղաքակիրթ, մաքրատեւ եւ պատասխանատու տիպար մը: Եթէ քանի մը օրինակ գտնուի այս մարդուն նման, արդեօ՞ք կըրնանք աղբ շարտելու երեւոյթը կասեցնել:

Կ'ըսուի թէ Հալեայի տիկնիկները մաքրատեւ են եւ բծախնդիր: Ի՞նչ փոյթ, եթէ բնակարանդ մաքուր է, իսկ փողոցները՝ աղբեր կուտակուած են: Ի՞նչ փոյթ, եթէ բնակարանդ մաքուր է, բայց գետին ինկած թաշկինակ մը կը վերցնես ու պատուհանէդ վար կը նետես, կամ թէ ինքնաշարժդ դուրս թողիկ մը կը շարտես գաւկիդ աչքին առջեւ: Արդեօք մեր գաւակները մեր արարքները չե՞ն կապկեր: Արդեօք մենք չե՞նք մեր գաւակներուն դաստիարակութեան աղբիւրը: Ուրեմն նմանօրինակ փտերէ ձերբագատելու համար դաստիարակութիւնը նախ տուններէն ներս պետք է սկսի, ապա՝ դրացիներէն եւ ակումբներէն: Հաւանաբար օր մը ունենանք մաքուր, գեղեցիկ եւ «Երազային Հալեայ» մը:

### ՎԱՅԱՆ...

Սկիզբ՝ էջ 10

Մթնոլորտին բոցերուն մէջ կ'այրեին անոնք՝

Ճերմակաթել աղաւնիներ իմ հոգես թռած...

Կ'ըսէի անոր ինչպէս գիւնը սիրելուս համար

Աւելորդ գգեստներուս նման պիտի նետեի

Ամբողջ հպարտութիւնս մեկդի...

Քերթուածները ազնուական, մաքուր ու պայծառատես բանաստեղծի հոգւոյն հայելին են: Սփիւռքահայ բանաստեղծներուն մէջ սիրոյ քերթուածներու դասին կիւրծն ու պղատոնական սերը լաւագոյն ձեւով արտայայտող վարպետը Թեքեանն է:

### ԿՐԹԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 8

քեր պատրաստուին, առաւել եւս՝ որքան ալ դասաւանդման արդիական մեթոտներ կամ միջոցառումներ որդեգրուին, վերջին հաշուով անոնց գործադրութիւնը, ինչպէս նաեւ ուսումնադաստիարակչական ողջ աշխատանքին ղեկավարութիւնը վերապահուած է կրթական մշակին: Ան այդ, առաւել օգտակար եւ արդիւնաբար պիտի ստացուէր եթէ կրթական ծրագրերու մշակումն ու դպրոցական (տեսչութեան, ուսուցիչներու եւ աշակերտութեան վերաբերեալ) բոլոր տնօրինումները վճարատախառն մանկավարժ ուսուցիչներու կամ կրթական ասպարէզին քաջածանօթ ու անոր խնդիրները, մտահոգութիւնները լաւապէս ընկալող, բաժնող մասնագէտներու:

Կեանքի թէ գիտութեան յառաջընթացին հետ քայլ պահելու, այդ

յառաջխաղացքին հայթայթած նորագոյն գիտելիքները իւրացնելու եւ անոր թելադրած բարեկարգումները կրթական համակարգէն ներս ներմուծելու դժուար բայց քաղցր պարտականութիւնը բաժին ինկած է կոչումի տէր իրաւ ուսուցիչին:

Ուսումնադաստիարակչական ասպարէզին ծառայող մշակներու թէ պատասխանատուներու պատրաստութեան ու վերադասակարգման հեռանկարով ձեռնարկուած սեմինարներ կամ դասընթացքներ, միաժամանակ՝ կրթական գիտաժողովներ եւ ուսուցչական համագումարներ, բնականաբար, մեծ օգտակարութիւն կրնան ունենալ վերոնրջեալ աշխատանքները լաւագոյնս արդիւնաւորելու համար: Այսօրինակ միջոցառումներու աշխարհագրական ընդգրկումի ծիրը, բնականաբար, կը մնայ սահմանելի բազմամասն պայմաններու նկատառումով ու յարգումով:

### ԾԱՆԻՐ...

Սկիզբ՝ էջ 5

քի հետ յարաբերութիւնը կամ հարեւանդարծութիւնը մարտահրաւեր չէ այլ՝ ենթակայական որոշում: Այդ Սփիւռքի ինքնաճանաչման խնդիրն է այսօր որ սեղանի վրայ կը դրուի:

Ինքնաճանաչման այս նորագոյն հրամայականը չ'ենթադրեր անպայման ցարդ Սփիւռքը սահմանած եռակի յարացոյցի իմաստազրկումը կամ ժխտումը: Բայց անհրաժեշտ կը դարձնէ անոր քննադատական ընկալումն ու այժմեականացումը: Հաւաքականութիւններու մէջ տիրապետող կարծիքներու ճանաչումը կ'ենթադրէ հանրային կարծիքի հետագօտման գիտական միջոցի կիրառում, որ Սփիւռքի մէջ նախընթաց չունէր մինչեւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնադրամի ֆինանսաւորումով անցեալ տարի սկիզբ առած Լոնտոնի Հայ Հիմնարկի նախաձեռնութիւնը՝ Հայ Սփիւռքի Հետազօտութեան Ծրագիրը: Առաջին տարուան փորձը արդէն Հիմնարկի կայքէջին վրայ գետեղուած եւ հանրութեան տրամադրելի ընդարձակ

զեկոյց մըն է, ուր ամփոփուած են սփիւռքեան առաջին չորս համայնքներու մէջ տեղի ունեցած հարցախոյզի արդիւնքներն ու անոնց շատ սկզբնական վերլուծումը: Ծրագրի այս երկրորդ տարուան համար նկատի առնուած են հայահոծ չորս տարբեր եւ աշխարհագրականօրէն իրարմէ հեռու երկիրներու մէջ կայացած համայնքներ՝ Լիբանան, Զանաւա, Արժանթին եւ Ռումանիա: Ծրագիրը արդէն ընթացքի մէջ է եւ ոչ միայն մեծ հետաքրքրութիւն այլեւ խանդավառութիւն առաջացուցած է: Աւելին, համայնքային ղեկավարութիւններ որոշուած են ծրագիրը եւ անոր տուած են իրենց անվերապահ աջակցութիւնը: Այս խանդավառութեան ու գօրակցութեան հիմնական պատճառը ոչ միայն նախաձեռնութեան բերած նորութիւնն է, այլեւ՝ ծրագրի պատրաստութեան ու գործադրութեան մասնագիտական որակը, քաղաքական թէ գաղափարական չեզօքութեան խստապահանջութիւնը, համայնքի մէջ գործուն թէ համայնքէ դուրս իր հայ ինքնութեան յանձնառու թէ ինքզինքը հայ զգացող ամեն անհատի մասնակցութեան քաջալերումը եւ արդիւնքներուն բաց, թափանցիկ ու բոլորին տրամադրելի ըլլալու իրողութիւնը:

Ծրագրին ֆինանսաւորումը նկատի առնուած է առայժմ երեք տարուան համար: Այլ խօսքով գալ տարի եւս տեղի պիտի ունենայ այն չորս այլ համայնքներու մէջ եւ 2021-էն սկսեալ: Թուական մը, որ կը գուգադիպի անկախութեան 30-ամեակին, արդէն կ'ունենանք Սփիւռքի մէջ հանրային կարծիքի առարկայական տուեալներու գօրաւոր ենթահող մը, որուն վրայ Սփիւռքի նոր յարացոյցի բանավեճը կրնայ գարգանալ: Եթէ, անշուշտ, սփիւռքեան ղեկավարութիւնը առաջին հերթին եւ հայրենի իշխանութիւնները փափաքին, տրամադիր ըլլան այդ ընելու... Այսինքն՝ Հայ Սփիւռքի Հետազօտութեան Ծրագրէն կերտելու Լուսաւորութեան դարուն Զանթի բանաձեւած (ինքնա)ճանաչման համարձակութեան (Dare to Know) հրաւերին

**«ԳԱՆՁԱՍԱՐ»**  
ՊԱՇՏՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

**Խմբագիր՝ Զարմիկ Զիւլքոչեան-Պողիկեան**  
**Սրբագրիչներ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան**  
**Յուշիկ Ղազարեան**  
**Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան**  
**Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան**  
**Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան**  
**Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան**  
**Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլքոչեան**  
**Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանտեան**

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:  
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:  
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:  
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:  
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:





Ռաֆֆի Միլախեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՏԵԹԵԼՆ

-Երկուշաբթի օր Դամասկոսի մեջ տեղի ունեցավ Սուրիոյ Պասքեթի Դաշնության անդամական ընդհանուր ժողովը, ուր քննարկուեցան ակումբները հետաքրքրող հարցերը եւ դաշնության աշխատանքները՝ իրենց դրական եւ ժխտական կողմերով:

-Անցեալ շաբթուան ընթացքին տեղի ունեցաւ Նաեւ Զալէպի պասքեթի փոքր աղջկանց բարեկամական մրցաշարը, որուն աւարտին ախոյեան դարձաւ Զուրիէն, անոր յաջորդեց ԶՄԸՄ-ի աղջկանց կազմը:



-Սուրիոյ Պասքեթի Դաշնութիւնը յայտարարեց 2019-2020 տարեշրջանի մրցաշարքերու ժամանակացոյցը: Պասքեթի տղոց եւ աղջկանց մրցումները պիտի սկսին 1 Ռեկտեմբեր 2019-ին եւ աւարտին 15 Ապրիլ 2020-ին:

-Զալէպի պասքեթի տղոց պատանեկան հաւաքականը տիրացաւ Սուրիոյ քաղաքներու հաւաքականներու ախոյեանութեան: Զալէպի հաւաքականին մաս կազմեց ԶՄԸՄ-ի խաղացող Յարութ Մաւեանը:

## ՀԱՅԿԱԿԱՆ

### ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԶԿԱՆ ԳԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ՊՈՍՆԻԱԸ

Եւրոպայի ֆութբոլի 2020 թուականի առաջնութեան որակաւորման հերթական փուլի մրցումներու շրջագիծին մեջ, Զայաստանի հաւաքականը Վազգէն Սարգսեանի անուան Զանրապետական մարզադաշտին վրայ հիւրընկալեց Պոսնիա Զերսեքովինայի հաւաքականը եւ յաջողեցաւ պարտութեան մատնել գայն 4 - 2 արդիւնքով: Մրցումի տելոդութեան Զայաս-



տանի մարզիկները իշխեցին խաղարկութեան: 3-րդ վայրկեանին Զենրիկ Միխիթարեան կատարեց կոլերուն բացումը, որմէ տասը վայրկեան ետք Էտին Ճիքօն հաւասարեցուց արդիւնքը: Երկրորդ կիսախաղին հայերը շարունակեցին իրենց յարձակումները: Միխիթարեան արձանագրեց իր ու հաւաքականին երկրորդ կոլը, բայց ուրախութիւնը շատ երկար չտեւեց եւ չորս վայրկեան ետք մրցակից խումբը նշանակեց հաւասարութեան կոլը: Յովհաննէս Զամբարձումեան Զայաստանի երրորդ կոլով իր ներկայութիւնը փաստեց դաշտին վրայ: Նախքան մրցումին աւարտը, Պոսնիոյ խումբէն

Լոնչար, Միխիթարեանէն եկած գնդակը սխալմամբ ուղղեց իր կազմին դարպասը՝ նշանակելով Զայաստանի չորրորդ կոլը: Անցեալ Զինգաբթի, Նոյն մարզադաշտին վրայ, Զայաստանի հիւրը դարձաւ Իտալիան: Մրցումը վերջ գտաւ 3-1 արդիւնքով՝ ի նպաստ Իտալիոյ: Զանդիպումը սկսաւ հայ մարզիկներու աշխուժ խաղարկութեամբ: Անոնք 11-րդ վայրկեանին յաջողեցան ցնցել մրցակիցին դարպասը Ալեքսանտր Կարապետեանի կոլով: Կոլէն ետք, իտալացիները ամբողջ կազմով անցան յարձակողականի: Չոյգ կազմերու խաղացողներուն միջեւ լարուած մթնոլորտ մը ստեղծուեցաւ: Իտալիոյ հաւաքականի կազմէն դեղին քարտ ստացաւ Վերաթին, իսկ Զայաստանէն՝ Ղազարեանն ու Կարապետեանը: 27-րդ վայրկեանին Իտալիոյ հաւաքականը վերաշխուժանալով նշանակեց հաւասարութեան կոլը՝ Անտրիա Պելլոթիի հարուածով: Նախքան դադարը, Զայաստանի կազմէն Ալեքսանտր Կարապետեան երկրորդ դեղին քարտը ստացաւ եւ կարմիր քարտով հեռացաւ դաշտէն:

Երկրորդ կիսախաղին, խաղարկութեան ոճը ամբողջովին փոխուեցաւ: Իտալացիները տիրապետեցին խաղարկութեան: 77-րդ վայրկեանին Լոնչեցօ Պելլեկրինիի հարուածով արձանագրուեցաւ Իտալիոյ երրորդ կոլը, որմէ երեք վայրկեան ետք Պելլոթին արձանագրեց իր երկրորդ, իսկ հաւաքականի երրորդ կոլը: Կիրակի օր, Նոյն դաշտին վրայ, Զայաստանի հիւրը դարձաւ Պոսնիա Զերսեքովինայի հաւաքականը:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՏԻ ԽԻԱՆ ՊԻՏԻ ԼԵԷ ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ԻՆԱՅԹԸՏԸ

Կիրակի օր անգլիական Մանչեսթըր Ինայթսի դարպասապահ Տեյվիտ Տի Խիան պաշտօնապէս յայտարարեց, որ յառաջիկայ ամրան փոխադրաշրջանին պիտի փոխադրուի Իտալիա:



Վերջինս կը նախատեսէ անվճար ձեռք բերել սպանացի դարպասապահը: Ըստ Sky Sports-ի, Խիա կրնայ փոխարինել Աթլետիքօ Մատրիտի դարպասապահ Եան Օպլակը, ստանձնելով «կարմիր սատանաներ»-ու բերդի պաշտպանութեան պատաս-

խանատութիւնը: Աւելցնենք, որ Եան Օպլակի պայմանագիրը Աթլետիքոյի հետ նախատեսուած է մինչեւ 2023 թուական: Այս պատճառով անգլիական ակումբը դժուարութիւն պիտի գտնէ Օպլակը միացնելու կազմին:


### ԶԵՆՐԻԿ ՄԻԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱՅԱՎ ՌՈՍՄԱՅԻՆ

Զայաստանի հաւաքականի խմբապետ Զենրիկ Միխիթարեան, մէկ տարուան համար, միացաւ Իտալիոյ մայրաքաղաքի Ռոմա խումբին:

Միխիթարեան բժշկական ըննութիւնները յաջողութեամբ անցնելէ ետք ստորագրեց իր պայմանագիրը: Ըստ փոխանցուած տեղեկութիւններու, իտալական ակումբը մէկ տարի ետք իրաւունք պիտի ունենայ գնելու Միխիթարեանը:



Այս շրջանին հայ մարզիկը պիտի ստանայ տարեկան 3,5 միլիոն եւրօ: Իտալական Ռոմա ակումբի երեք խաղացող Ֆրանչեսքօ Թոթի խօսելով Միխիթարեանի մասին ըսաւ. «Միխիթարեան կրնայ դրակ ապահովել խումբին: Անոր տեղափոխութիւնը լաւ քայլ է: Ան վերջին շրջանին Արսենալին մաս չկազմեց, սակայն լիայոյս եմ, որ Զոմմի մեջ հանգիստ տարի մը կ'անցնէ»:





## ՎԵՐԱՄՈՒՏԵՆ ԴԱՏԿԵՐՆԵՐ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ մանկապարտեզ



Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ նախակրթարան



Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ ճեմարան



Քեսապի Հայ Կաթողիկէ Բարեյուսոյ վարժարան



Քեսապի Հայ Աւետարանական Նահատակաց վարժարան



Հասիչէի Ազգ. Մերոպեան վարժարան



## ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ «ՉՈՒԱՐԹՆՈՅ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ ԱՏԱՄՆԱԲՈՒՇՆԵՐՈՒ ՄԻՉԱՉԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Շաբաթ, 7 Սեպտեմբեր 2019-ին, Համազգայինի «Չուարթնոյ» երգչախումբը Դամասկոսի պետական Սիմֆոնիք նուագախումբին հետ, խմբավար Միսաք Պաղպուտարեանի գեղարուեստական ղեկավարութեամբ մասնակցեցաւ Հալէպի բերդին մէջ տեղի ունեցող Ատամաբուժներու Միջազգային Խորհրդաժողովի բացման հանդիսութեան:



Հանդիսութիւնն ու խորհրդաժողովը կազմակերպուած էին Սուրիոյ Ատամաբուժներու սենտիքային նախաձեռնութեամբ:

Երգչախումբը սուրիական քայլերգէն ետք ներկայացուց դասական եւ ժողովրդային երգեր:

Հանդիսութեան ներկայ էին Պաաս կուսակցութեան Հալէպի գլխաւոր քարտուղարին ներկայացուցիչը, Հալէպի նահանգապետը, պետական բարձրաստիճան պատասխանատուներ եւ հարիւրաւոր հանդիսականներ:

Նախապէս «Չուարթնոյ» երգչախումբը խմբավար Գայիանէ Սիմոնեան-Տերեանի ղեկավարութեամբ, յաջորդական փորձերով պատրաստուեցաւ համերգին:

Գամիշլիի Ազգային Եփրատ մանկապարտեզ



Գամիշլիի Ազգային Եփրատ նախակրթարան



Գամիշլիի Ազգային Միացեալ Միջնակարգ վարժարան

